Azg
armenian daily

11 ՄԱՅԻՍ 1999 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 85 (1830)

Հարավսլավիան զորքերը հանում է Կոսովոյից

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հարավսլավական իշխանությունները տեղեկացրել են, որ իրենց զինյալ ուժերը հեռանում են Կոսովոյից: «Տանյուգ» գործակալության հաղորդմամբ, զինյալ ուժերի հեռացումը սկսվել է երեկ գիշեր: «Ամերիկայի ձայնը» նշում է, որ դեռեւս պարզ չէ, արդյոք այդ քայլը Հարավսլավիայի դեմ հարձակումները կասեցնելու վերաբերյալ ՆԱՏՕ-ի նախադայմանների պատասխա՞նն է, թե՞ ոչ:

Լուկաշենկոն քննադատել է Ռուսաստանին՝ Հարավսլավիային չօգնելու համար

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Վոլգոգրադ կատարած այցի ընթացքում Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոն քննադատել է Ռուսաստանին այս բանում, որ վերջինս հարժարվել է օգնել Հարավսլավիային: Լուկաշենկոն հոդեստորեն է արտահայտվել Ռուսաստանի միջնորդական դերի առնչությամբ, նշելով, որ Մոսկվան անբավարար եռանդով է գործում:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Եռանախագահությունը բոլորի համար ընդունելի տարբերակների որոնումներում

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՅԻՍ, ՏՆՏՐՔ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա) մայիսի 6-7-ը Փարիզում կայացած հանդիպման ընթացքում վերստին հավաստել են դարաբաղյան հակամարտության այնպիսի կարգավորման հասնելուն աջակցելու իրենց ձգտումը, որն ընդունելի լիներ բոլոր երեք հակամարտող կողմերի Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի համար: Այսօր այդ մասին հաղորդեցին Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի դեսպանատանը, անդրադառնալով Ադրբեջանի արտաքին քաղաքականության գծով պետխորհրդական Վաֆա Գուլուզադեի այն հայտարարությունը հաստատելու կամ հերքելու խնդրանքին, թե Փարիզի հանդիպումներն իբր «լիովին հրաժարվել են ընդհանուր պետության սկզբունքից», որն ընկած էր դարաբաղյան հակամարտության կարգավորմանը նպատակաուղղված միջնորդների վերջին առաջարկությունների հիմքում:

Ուշագրավ է, որ պատասխանական Բաքուն «ընդհանուր պետության սկզբունքից համանախագահների հրաժարվելու մասին լուրը» մատուցել է որպես Ադրբեջանի դիվանագիտական հաղթանակ, որը մերժել էր համանախագահների վերջին ծրագիրը: Ի տարբերություն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի, որոնք համանախագահների վերջին միջնորդական նախաձեռնությունը համարում են «ոսկե միջինի» փոխզիջումային տարբերակ, Ադրբեջանը պնդում է, թե ընդհանուր պետության սկզբունքը ուղղակի սպառնալիք է իր տարածքային ամբողջականությանը:

Հիշեցնենք, որ պատասխանական երեւանն արդեն հայտարարել է իրենց նախագահների նահանջի անընդունելիության մասին: Նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդգծել է, որ ընդհանուր պետության սկզբունքն այն սահմանն է, որից այն կողմ Հայաստանն անցնել չի կարող, ընդսմին նշելով, որ պատասխանական երեւանը մտադիր չէ միակողմանի զիջումների գնալ: «Միջնորդների նահանջն ընդհանուր պետության սկզբունքից կնշանակի խրախուսել Ադրբեջանին եւ նրա անփոխզիջումային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցում», հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Միեւնույն ժամանակ նա հույս է հայտնել, որ «եթե համանախագահներն, այնուամենայնիվ, որոշեն հանդես գալ նոր առաջարկությամբ, արդա վերջինս, եթե ոչ տարով, արդա ոգով պետք է համապատասխանի ընդհանուր պետության հայեցակարգին»: Պատասխանական դուռնելի են համարում նաեւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի կարգավորումն ազատ ասոցիացիայի սկզբունքով:

Տես էջ 2

ՄԱՅԻՍ 9

Հայաստանում նշվեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրը

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ին, Երեւանի Հաղթանակի զբոսայգու Անհայտ զինվորի հիշատակը հավերժացնող կրակի մոտ ծաղկեպսակներ դրեցին ՀՀ նախագահը, Ազգ նախագահը, վարչապետը, ներկառավարության անդամներ, Ազգ պատգամավորներ, պատասխանատու անձինք հասարակական գործիչներ, զինվորականներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ, բազմաթիվ խաղաղապահներ:

1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանից մարտի դաշտ են մեկնել տասնյակ հազարավոր զինվորներ, Հայաստանում կազմված 6 ազգային դիվիզիաներից 4-ը հասել են Բեռլին, բնամու թիկունքում գործել են նաեւ հայկական պարտիզանական ջոկատներ: Հայաստանում եւ Սփյուռքում կազմակերպված հանգանակությունների միջոցներով կազմվել են տանկային շարասյուներ: Սփյուռքահայերը մասնակցել են Ֆրանսիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում եւ այլ երկրներում կազմակերպված Դիմադրության շարժմանը:

Ներկայումս Հայաստանում, ըստ պատասխանական տվյալների, բնակվում են Մեծ հայրենականի մոտ 20 հազար վետերաններ: Տարբեր տարիների խորհրդային Միության հերոսի կոչում են ստացել Հայաստանի 107 քաղաքացիներ, որոնցից 38-ը՝ հետմահու, իսկ Փառքի երեք աստիճանների շքանշաններով Հայաստանից պարգեւատրվել են 27 անձինք:

Վանո Սիրադեղյանը երեկ հայտնվեց Վանաձորում

Վանո Սիրադեղյանն այցելեց Վանաձոր: Չնայած ազատ արձակվելուց հետո Վ. Սիրադեղյանը խոստացել էր լրատվամիջոցներին չհանդիպել մինչեւ երեքշաբթի օրը, սակայն ըստ երեւույթին վանաձորցիներին շատ սիրելով որոշեց բացառություն անել: Հանդիպումը տեղի ունեցավ Վանաձորի տիկնիկային թատրոնում: Նույն Վանոն էր՝ իրեն հատուկ կեցվածքով, միայն դեմքին հոգնածություն էր զգացվում: Ազ պատգամավոր Արամ Մանուկյանի կարճ նախաբանից հետո խոսեց Վ. Սիրադեղյանը: Նա իր գալու նպատակը կապեց Ա. Մանուկյանի թեկնածությունը պատասխանելու հետ: Սիրադեղյանը ՀՀՇ-ի վիճակը չհամարեց շատ վատ, այլ ասաց. «Ջահելները պահպանվել են կուսակցության շարքերում, պահպանել են ընտրություններում աշխատելու կարողությունը... Աշխատելու ենք նաեւ մեր գաղափարական հակառակորդ Դաշնակցության դեմ եւ, կարծում եմ, որ էդպիսի կուսակցությունն ավելի լավ է պառլամենտում լինի, քան դրսում: Վերջապես էդ կուսակցությունը պիտի դառնա պառլամենտական, բայց եթե մեր թեկնածուների դեմ են աշխատելու, էդ թեկնածուն չպիտի անցնի...»:

Նա համոզմունք հայտնեց, որ ՀՀՇ-ն կանցնի 5 տոկոսի սահմանը՝ ավելացնելով, որ ամեն ինչ պետք է արվի խորհրդարանում գոնե 12 ՀՀՇ-ական աթոռներ ունենալու համար:

Սիրադեղյանը խոստովանեց, որ դժվար է, փող չկա, տեղերն առանց փողի չեն կարողանում, եւ այդ գործի համար լուրջ գումարներ են պետք: Անդրադառնալով իր նկատմամբ հարուցված քրեական գործին, նա խոստացավ այդ մասին մանրամասն խոսել երեքշաբթի: Հարցերը բազմազան էին. Դարաբաղից մինչեւ «Արմենիներ վերջին առաջարկությունների հիմքում: «Ես կարծում եմ, սխալ են անում իրենք... Հավատացին իրենց ուժերը, ուզեցին մի քայլ արեցին, որ տակից դուրս գան, բայց եթե էդ տղերքից մի 5-10 հոգի մտներ պառլամենտ, դա մենակ օգուտ կտար...

Շիավաստալով հարց չի լուծվում, պետք ա փորձել՝ գնալ, ընտրվել»:

«Հետաքրքիր» էր Սիրադեղյանի կարծիքը քաղաքականության մասին. «Քաղաքականությունն անբարոյական բան է, բայց լավ կլինի, որ շատ բարոյական մարդիկ զբաղվեն քաղաքականությամբ»: Դահլիճից մեկը չզսպելով զգեւորությունն ասաց. «Մալադեց»:

«Հիմա ինչքան էլ ձայն ստանանք, մեկ է, առաջվա 40-50-ից հետո համարյա թե արդյունք չէ, բայց հիմա ոնալ ձայներ են լինելու», եզրակացրեց Վ. Սիրադեղյանը՝ անուղղակի համածայնելով մեզ հետ, որ մինչ այդ ուրեմն ՀՀՇ-ի ձայները ոնալ չեն եղել: Վանո Սիրադեղյանը հրաժեշտ տվեց լրագրողներին, իսկ մեզ մնաց սպասել նրա նոր եւ ավելի հետաքրքիր հայտնությանը:

ՄԱՆՎԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ
Վանաձոր

Այսօր Երեւան է ժամանում Հունաստանի նախագահը

Այսօր պետական այցով Հայաստան կժամանի Հունաստանի նախագահ Կոնստանտինոս Ստեֆանոպուլոսը: Պատվիրակության կազմում են արտաքին գործերի նախարարի տեղակալ Գրիգորիս Նիոտիսը, ազգային էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ալեքսանդրոս Բալտասը, պատասխանատու այլ անձինք: Կոնստանտինոս Ստեֆանոպուլոսը կհանդիպի նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի, Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի հետ: Տեղի կունենան հայ-հունական բանակցություններ՝ ընդլայնված կազմով: Նախատեսվում է երկկողմ փաստաթղթերի ստորագրում, ճեպազրույց լրագրողների հետ: Հունաստանի նախագահը կմասնակցի նաեւ պետական համալսարանի գրադարանի հունական սրահի բացմանը: Նրան կընտրուի Երեւանի Մայր բուհի դոկտորի պատվավոր աստիճան: Կոնստանտինոս Ստեֆանոպուլոսը կայցելի Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, Մատենադարան, ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ծաղկեպսակ կդնի Մեծ եղեռնի զոհերի հուշակոթողին: Նախատեսվում է նաեւ հանդիպում Հայաստանում հունական համայնքի ներկայացուցիչների հետ: Հունաստանի նախագահին ուղեկցում են մեծ թվով գործարարներ, որոնք գործնական հանդիպումներ կունենան Հայաստանի գործարարների հետ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԲՐՅՈՒՍԵԼ

«ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում կկարողանանք պատշաճ պահել ՀՀ-ի շահերը»

Վստահեցնում է դեսպան Վիգեն Չիտեչյանը

Եվրախորհրդարանի միջանցքներում դժվար չէր հանդիպել Բելգիայում, Եվրամիությունում, ՆԱՏՕ-ում ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Գրիգորիս Նիոտիսը, ազգային էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ալեքսանդրոս Բալտասը, պատասխանատու այլ անձինք: Կոնստանտինոս Ստեֆանոպուլոսը կհանդիպի նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի, Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի հետ: Տեղի կունենան հայ-հունական բանակցություններ՝ ընդլայնված կազմով: Նախատեսվում է երկկողմ փաստաթղթերի ստորագրում, ճեպազրույց լրագրողների հետ: Հունաստանի նախագահը կմասնակցի նաեւ պետական համալսարանի գրադարանի հունական սրահի բացմանը: Նրան կընտրուի Երեւանի Մայր բուհի դոկտորի պատվավոր աստիճան: Կոնստանտինոս Ստեֆանոպուլոսը կայցելի Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, Մատենադարան, ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ծաղկեպսակ կդնի Մեծ եղեռնի զոհերի հուշակոթողին: Նախատեսվում է նաեւ հանդիպում Հայաստանում հունական համայնքի ներկայացուցիչների հետ: Հունաստանի նախագահին ուղեկցում են մեծ թվով գործարարներ, որոնք գործնական հանդիպումներ կունենան Հայաստանի գործարարների հետ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Հեգնանքն անչափելի կատեգորիա է

Երեւանի մամուլի ակումբը երեկ հրաւիրակեց իր դիտարկումները մայիսի 1-ապրիլի 30 ժամանակահատուածում: Հիմնական նյութին անցնելուց առաջ, սակայն, ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը դժգոհեց «Ազգից» եւ «Առավոտից» նախորդ դիտարկումների վերաբերյալ դրսեւորած թերահավատության համար («Ազգն» այդ դիտարկումների «միլիմետրանոց» եղանակն անհեթեթ էր համարել, «Առավոտը»՝ «սիզիփոսյան աշխատանք»):

Պրն Նավասարդյանն էական տարբերություն արձանագրեց էլեկտրոնային եւ տպագիր լրատվամիջոցների միջեւ. էլեկտրոնային լրատվամիջոցները հիմնականում չեզոքություն են դրսեւորել, Ազգային հեռուստատեսության «Օրակարգ» ծրագիրը, մասնավորապես, «ոչկորդ է սահմանել» դրական կամ բացասական հիշատակումներով որեւէ քաղաքական գործչի «չմեծարելով»: Թերթերի մեծ մասը նախընտրել են իրենց հետ կուսակցական թելերով կապված քաղաքական գործիչներին: «Ազգն», օրինակ, ըստ ակումբի դիտարկումների, թերթային ամենամեծ մակերեսը տրամադրել է ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանին՝ ի տարբերություն «Հայքի», որը գրեթե հավասար աչքով է նայել սիրաղեղյանական եւ արարատյանական թեւերին, ինչից ելն Նավասարդյանը եզրակացրել է, որ «ՀՌԱԿ երկու թեւերի հաշտությունը նախընտրական դաշնակցություն էր»: Համաձայնելով «Ազգի» այն նկատառմանը, թե քաղաքական գործիչների գործունեությունը լուսաբանվում է նրանց ակտիվության չափով, ելն Նավասարդյանը նշեց ցանկության դեպքում նրանց ակտիվացնելու հնարավորությունը:

Պետական լրատվամիջոցները մնացել են իշխանամետ դիրքերում, առավելագույնս լուսաբանել են ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանի գործունեությունը: «Օրագիրն» ամենամեծ թերթային մակերեսը տրամադրել է «Նոր ուղի» կուսակցության առաջնորդ Բլեյան Ազատին, բոլոր մյուս թերթերից առավել լուսաբանել է ընտրություններից «խոռված» քաղաքական ուժերին եւ գործիչներին, ինչը, կարծում ենք, բնական է: «Իրավունքը» նախընտրել է «Իրավունք եւ միաբանություն» դաշինքի համամասնական ցուցակի առաջատար Արտաշես Գեղամյանին (երկրորդ տեղում, որտեղ էլ տարօրինակ է, Էդվարդ Սանդոյանն է, եւ միայն երրորդ տեղում՝ ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը): «Երկիրի» եւ «Հայոց աշխարհի» հրաւիրակումներում Վահան Հովհաննիսյանը համաչափաբար առաջին եւ երկրորդ տեղերում է, վերջինիս հաջորդում է ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը:

«Հայքը» հետաքրքրված է առաջին հերթին Ֆաղել Սարգսյանով. Վահան Միրաղեղյանը երկրորդ տեղում է: «Նովոյե վրեմյան» նախընտրել է թերթի հիմնադիր, կազմակերպության ղեկավար Արկադի Վարդանյանին: «Ժամանակը», կուսակցականության սկզբունքը խախտելով, ուշադիր է ՀՀԿ-ի հետ կապ չունեցող ոչեական այրերի նկատմամբ. Վազգեն Սարգսյանն ընդամենը ութերորդ տեղում է: Տպագիր լրատվամիջոցներում առանձնանում են «Առավոտը» եւ «Գոլոս Արմենիին», որոնք մեծ տեղ են հատկացրել Իգոր Մուրադյանի վերլուծական հոդվածներին: Քանի որ այդ թերթերն ընդհանուր քաղաքական հակումներ չունեն, դիտարկումների հեղինակները ենթադրում են, որ նրանց հետաքրքրությունը վերաբերում է Իգոր Մուրադյան հեղինակին, ոչ թե քաղաքական գործչին:

Հիշատակումների թվով շարունակում է առաջատար մնալ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Հաջորդը Արմեն Դարբինյանն է՝ ցցուն բացասական հավելեցողով, երրորդ տեղում՝ Վազգեն Սարգսյանը: «Միասնություն» դաշինքի հավելեցիոը հիմնականում դրական է, ՀՀՇ-ի Վանո Սիրադեղյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի հավելեցիոը՝ ծայրահեղ անբարենպաստ: Դրական է ԱԺՄ գործիչների, Հրանտ Խաչատրյանի, Արտաշես Գեղամյանի, Արթուր Բաղդասարյանի հավելեցիոը, տանելի՝ Սերգեյ Բաղալյանինը եւ Պարույր Հայրիկյանինը: Էդուարդ Եգորյանի հավելեցիոը բացասական է (2-րդ ական, 39 բացասական. էլեկտրաէներգիայի սակագների սառեցման արտավը, երեւում է, չի օգնել):

Մամուլի ակումբի դիտարկումները, սակայն, հավի չեն առնում հեգնանքի գործոնը, որ այսօր անպակաս է հայրենի մամուլից: Ուստի հավելեցողային ցուցանիշը, բնականաբար, լիարժեք չի արտացոլում լրատվամիջոցների համակրանքներն ու հակակրանքները: «Հեգնանքը չափել հնարավոր չէ, իսկ տպավորությունների մակարդակով հավի առնելը լրատվամիջոցների նյարդային արձագանքն է առաջացնում», ասաց ելն Նավասարդյանը, «Ազգի» հարցին պատասխանելով:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ



ԱՍՈՒԼԻՍ

Պարույր Հայրիկյանի կարծիքով ԱԻՄ-ը փորձած մածուն է

Ժուռնալիստի տանը երեկ մեկնարկած նախընտրական ասուլիսաշարի առաջին հյուրը «ԱԻՄ+» դաշինքն էր՝ Պարույր Հայրիկյան, ԻՄ դաշնակից «Հայրենիք-սփյուռք» կազմակերպության նախագահ Հրայր Տեր-Եսայան, մեծամասնական ընտրակարգով առաջադրված ԻՄ ներկայացուցիչներ: Պարույր Հայրիկյանը, ինչպես միշտ, լավատես էր. կազմակերպությունն առաջին անգամ է դաշինքով գնում ընտրությունների եւ, ազատ ընտրության պարագայում, շահեկան արդյունքներով կհաստի վերջնագիծը, հանգի, ի տարբերություն նորահայտ քաղաքական ուժերի, ԻՄ-ը տարիներ շարունակ կայուն կշիռ եւ դերակատարություն ունի Հայաստանի քաղաքական դաշտում: ԻՄ-ը, պատկերավոր ասած, ոչ փորձած քաղ է, ոչ էլ անփորձ մածուն, այլ՝ փորձած մածուն, որը, իշխանական լծակներ չունենալով, կենսագործել է իր ծրագրի գրեթե բոլոր դրույթները՝ այդ գործին մասնակից դարձնելով նույնիսկ այդ դրույթների հակառակորդներին (խոսքը նախկինում իշխող քաղաքական ուժի մասին է):

Ընտրություններին կուսակցական ցուցակներով մասնակցող 21 կուսակցությունների կամ դաշինքների կեսն, ըստ Հայրիկյանի, նորույթ են ոչ միայն քաղաքացիների, այլեւ քաղաքական գործիչների համար եւ հաճախ կասկածելի ծագումնաբանություն ունեն: Մնացած (հայտնի, կայուն վարկանիշ ունեցող) կուսակցություններից ԻՄ-ը տարբերվում է նրանով, որ երկրի վրա կուռքեր ստեղծելու մտադրություն չունի եւ համարում է, որ «Աստծուց դուրս ոչինչ չկա»՝ առաջնորդվելով քրիստոնեական սկզբունքներով, մասնավորապես «մի դատիր, որ չդատվես» դրույթով: «Հայհոյելը, ննջադատելը, մեղադրելն ամենահետաքրքիր բաներն են: Չնայած մեր հիմնական մրցակիցների վերաբերյալ պատրաստի փաթեթներ (դոսյեներ) ունենք, օրինակ, շատ հայտնի մի քաղաքական գործչի վերաբերյալ, որը վերջերս ասացուցեց, որ քաղաքական գործիչ չէ եւ 77-78 թթ. աշխատում էր հայ ժողովրդի, սփյուռքի դեմ: Մենք որոշել ենք բարեկիրթ կեցվածք որդեգրել եւ հակաքարոզչությամբ չզբաղվել: Բայց եթե մեկնումեկը համարձակվի դատավորի դեր ստանձնել, մենք նրան կասենք. դո՞ւ ես դատավորը...», բարեկրթորեն սպառնաց ԻՄ նախագահը՝ դժգոհելով, որ որոշ ուժեր, մարդկանց չիմացությունից օգտվելով, շահարկում են ԱԻՄ-ի «իշխանամետությունը»:

Առաջիկայում մեծ դժվարություններ են սպասվում, արդեն իսկ բոնարարների, խախտումների փաստերկան, արձանագրեց Պարույր Հայրիկյանը՝ համոզմունք հայտնելով, որ «վերին իշխանություններն անմասն են այդ խախտումներից»: Սիմականներն արդեն իսկ կանխել են խախտումների երկու դեպքեր (Գյումրիում եւ Սյունիքում), առաջիկայում էլ վճռականությամբ կպայքարեն դրանց դեմ: Մայիսի 30-ի ընտրություններին ԻՄ-ը հիմնավոր է նախապատրաստվել՝ հրատարակել եւ տարածում է ավելի քան 1 մլն նախընտրական գրքույկներ ու թռուցիկներ, նախաղատվություն է տալիս ընտրողներ հետ անմիջական շփումներին (օրինակ, «բանավոր պայմանագրերի» ձեւով), աշխատում է սին խոստումներ չտալ:

Անդրադառնալով ՀՀՇ-ի «մակաբոխությանը», Պարույր Հայրիկյանն ասաց. «Հիշականներ, գոնե դուք լսեք: Դո՛ւք եք ստեղծել այս իրավիճակը եւ դեռ արդարությունի՞ց եք խոսում»: Իբրեւ օրինապահ գործիչ, ԻՄ նախագահը չհրաժարակեց հասարակական հարցման վերջին տվյալները՝ նշելով միայն, որ 5 առաջատար կուսակցությունների վարկանիշը պահպանվում է. ԻՄ-ը, նախնական տվյալներով, երկրորդ-երրորդ տեղերում է:

Լ. Պ.

ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ

Եռանախագահությունը բոլորի համար ընդունելի տարբերակների որոնումներում

Սկիզբը էջ 1

Մինչդեռ, մեկնաբանելով պատճառական Բաքվի դիրքորոշումն այդ հարցում, Իտալիայի փոխարտգործնախարար Վալենտինո Մարտելին, որը տարածաշրջան ծեռնարկած իր վերջին այցի ընթացքում հանդիպել էր Անդրկովկասի հանրապետությունների ղեկավարների հետ, «Սնարֆ»-ի թղթակցին հայտարարել էր, որ «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին առաջարկությունից «ընդհանուր պետություն» տերմին-բառակապակցությունը հանելու դեպքում, առանց փոխելու այդ սկզբունքի եւ, ամբողջությամբ վերցրած, առաջարկության էությունը, կարելի է հասնել Ադրբեջանի կողմից միջնորդների այդ նախաձեռնության ընդունմանը, որը Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղն արդեն պատրաստել են»: Այս առումով կարեւոր նշանակություն է ձեռք բերում Գուլուզադեի այն հայտարարությունը, թե Փարիզի հանդիպման ընթացքում համանախագահները պայմանավորվածություն են ձեռք բերել «կողմերին զրոյ որոշ ծեւակերպումներից հրաժարվելու եւ դրանք նորերով փոխարինելու» մասին:

Կարեւոր է նշել, որ հավատի դիվանագիտական աղբյուրներից «Սնարֆ»-ի ստացած տեղեկատվության համաձայն, ընդհանուր պետության սկզբունքը բանակցային գործընթացի վերսկսման համար որոշես հիմք ընդունելուց Ադրբեջանի հրաժարվելը առաջին հերթին պայմանավորված է այդ երկրում առկա ներքաղաքական խնդիրներով: Ընդհանուր պետության հայեցակարգի նախնական մշակման փուլում, հատկապես մինչ Ադրբեջանում կայացած վերջին նախագահական ընտրությունները, Մինսկի խմբում համանախագահող երկրներն այդ նախաձեռնության նկատմամբ դրական արձագանք էին ստացել ինչպես Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարների՝ Ռոբերտ Քոչարյանի եւ Արկադի Ղուկասյանի, այնպես էլ Ադրբեջանական Հանրապետության նախագահ Հեյդար Ալիեւի կողմից:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագրական խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Հեռ. 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Հանձնարարչային ծառայություն / 562941
Apple Macintosh համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Հայկական մենթալիտետը եւ արտասահմանյան ստանդարտները

Անցումային տնտեսությամբ երկիր բնութագրվող Հայաստանում թե տնտեսական ածի ինչպիսի ցուցանիշներ գոյություն ունեն, հստակորեն պատկերացում կազմելը դժվար է: Սակայն այն, որ տեղական արտադրանքը հայտնվել է ներքին շուկայում եւ դեռ փորձեր է կատարում արտաքին շուկա դուրս գալու՝ խոստումնալից է: Որոշակի քանակով արտադրանքի առկայությունը դեռեւս քիչ է արտահանման համար: Կարեւոր գործոններից է որակի խնդիրը. արտահանվող յուրաքանչյուր ապրանք պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին: «Հայկոնսալտ» եւ «Բիզնեսին ընդառաջ» խորհրդատվական կենտրոնների նախաձեռնությամբ Հայաստանում էր Global certification ստանդարտացման եւ որակի կառավարման ֆիրմայի ներկայացուցիչ Պիտեր Գիբը, որը մեր առաջատար ֆիրմաների ներկայացուցիչներին սեմինար-դասախոսության տեսքով ծանոթացրեց ստանդարտացման եւ որակի կառավարման խնդիրներին: Որակի կառավարմանն անդրադառնալիս Պիտեր Գիբը կարեւորեց կառավարության վերահսկողության դերը, սպառողի ճաշակը, պահանջները, ինչպես նաեւ ծեռնարկությունների հնարավորությունները: Ապա ներկայացրեց 20 էջանոց տեսային փաստաթուղթ, որը հնարավորություն կտա ստուգելու մեր ծեռնարկությունների զարգացման աստիճանը, համաձայն որի կիրառացվի հավաստագրումը: Հավաստագրման գործընթացը զգալի գումար արժե՝ մոտ 20 հազար ամերիկյան դոլար եւ դեռ ավելին:

Պիտեր Գիբը նշեց, որ Global certification-ն աշխատում է ISO-9000 ծրագրի համապատասխան սկզբունքներով, որը որակի կառավարման եւ արտադրանքը միջազգային շուկա դուրս բերելու լավագույն երաշխիքն է աշխարհում եւ հատկապես Եվրոպայում: Հայաստանում կգործեն ISO-9001 եւ 9002 ծրագրերը:

Իսկ ահա «Արմենմոտոր» ծեռնարկության ներկայացուցիչը նախ կասկածի տակ վերցրեց Պիտեր Գիբի եւ նրա ներկայացրած կազմակերպության լիազորությունները, ապա եւ ISO-9000 ծրագրի արդյունավետությունը՝ պնդելով, որ աշխարհում առավել ընդունելի են կանադական չափանիշները: Պիտեր Գիբը նախ հայտարարեց, որ աշխարհի եւ ոչ մի պետությունում խնդիրներ չեն առաջացել՝ կապված իրենց օրինական գործունեության հետ, եւ ապա հավաստիացրեց, որ ISO-9000 ծրագրով հաստատագրված արտադրանքը աշխարհի ցանկացած երկիր արտահանման ոչ մի դժվարություն չունի:

Global certification-ը նոպատակ ունի Հայաստանում եւս բացել իր մասնաճյուղը: «Գեղամա» ծեռնարկությունը, որը զբաղվում է հաղորդալարերի արտադրությամբ, շուտով Global certification-ի կողմից կստանա ստանդարտի վկայական եւ առաջինը Հայաստանից կարտահանի միջազգային չափանիշներին համապատասխան արդյունք: «Հայկոնսալտ» խորհրդատվական ծառայությունը եւս հույս ունի մոտ ապագայում ծեռք բերել միջազգային հավաստագիր:

Հայ գործարարներին ուղղված որն Գիբի հարցին, թե ի՞նչ հաճախականությամբ պետք է անցկացվեն որակի հսկողության գործընթացները, հայ գործարարներից մեկը կատակով պատասխանեց, որ ամեն օր, այլապես հայ գործարարների առջեւ դրված արտահանման խնդիրներից առավել դժվարինը ոչ թե ստանդարտացման համար մուծվելիք 20-25 հազար ամերիկյան դոլարն է կամ Global certification-ի կողմից ծեռնարկությունների շատ խստորեն ընտրությունը, այլ այն, որ անհրաժեշտ կլինի հաղթահարել հայկական մենթալիտետը՝ չխեղդել հաճախորդին:

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՄԲԱԳԻԿ

Մայիսի 9-ը կրկնակի տոն է հայ ժողովրդի համար. մեկը Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի օրն է, մյուսը՝ Շուշիի ազատագրման օրը: Եթե երկրորդը ազգային նշանակության տոն է, ապա առաջինը համամարդկային մի իրադարձություն էր՝ երկրորդ հաղթանակի 54-րդ տարեդարձի կապակցությամբ բազմաբնույթ միջոցառումներ էին կազմակերպվել իրենց վետերանների, ինչպես նաեւ իշխանությունների ու հասարակական տարբեր կառույցների կողմից:

Իրադարձությունը չէր շրջանցել Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը, որը վաղուց ի վեր համագործակցում է վետերանների խորհրդի հետ: Այս անգամ կուսակցության Հանրապետական վարչությունը վետերաններին հյուրընկալել էր «Թեմելյան» կենտրոնում, ուր լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ, կլոր սեղանի շուրջ տոնվեց հաղթանակի օրը: Բացման խոսքով հանդես եկավ ՀՌԱԿ համաստենապետ Հարություն Կարապետյանը, որը լրագրողներին իմիջիայլոց տեղեկացրեց, թե մաքխարհայինի ավարտը: Այս տոնը նախեւառաջ նրանց է, ովքեր վկան ու անմիջական մասնակիցն են եղել իր դաժանությամբ ու զոհերի քանակով աննախադեպ պատերազմի: Մայիսի 9-ը վետերանների տոնն է: Հաղթանակի 54-րդ տարեդարձի կապակցությամբ բազմաբնույթ միջոցառումներ էին կազմակերպվել իրենց վետերանների, ինչպես նաեւ իշխանությունների ու հասարակական տարբեր կառույցների կողմից:

Իրադարձությունը չէր շրջանցել Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը, որը վաղուց ի վեր համագործակցում է վետերանների խորհրդի հետ: Այս անգամ կուսակցության Հանրապետական վարչությունը վետերաններին հյուրընկալել էր «Թեմելյան» կենտրոնում, ուր լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ, կլոր սեղանի շուրջ տոնվեց հաղթանակի օրը: Բացման խոսքով հանդես եկավ ՀՌԱԿ համաստենապետ Հարություն Կարապետյանը, որը լրագրողներին իմիջիայլոց տեղեկացրեց, թե միջոցառումը որեւէ կապ չունի քաղաքական ուժերի, քաղաքական կուսակցությունների հետ, քանզի կուսակցության ու վետերանների համատեղ ջանքերով ավանդաբար տոնվել է: Այնուհետեւ պատասխան խոսք խնդրեց վետերանների խորհրդի նախագահ Պերճ Բոնապյանը. «Պատահական չէ, որ հատկապես այս կուսակցության հետ են սերտացել վետերանների հարաբերությունները», ուշադիր վերաբերմունքի համար շնորհակալություն հայտնելով եզրափակեց նա:

ՀՌԱԿ համաստենապետ Ռուբեն Միրզախանյանն իր ելույթում նշեց, որ անկախությունից հետո մինչեւ մեկ տարի առաջ անցյալի արժեքների ոտնահարման ամենացավալի փաստը վետերանների ու նրանց անմոռաց ներդրման հանդեպ իշխանությունների բացասական վերաբերմունքն էր: Ասենապետն ավելացրեց. «Մենք այն ժամանակ էլ վետերանների կողքին էինք եւ հանդես էինք գալիս ի պաշտպանություն նրանց»:

Իրենք վետերանները տարակուսանք ու մտահոգություն հայտնեցին նորաստեղծ կուսակցությունների թվաքանակի կտրուկ աճի կապակցությամբ: Վետերանները հայտարարեցին, որ ոչ միայն չեն տեսնում դրանց անհրաժեշտությունը, այլեւ ազգի միաբանության տեսանկյունից նման քանակությունը վնասակար են համարում: «Առաջնորդները ղեկավարելով, որ մեր հայրենակիցը մեծ ներդրում ունի «Թեմելյան» կենտրոնի կառուցման գործում, իսկ մոտ ժամանակներս պատրաստվում է իր իսկ հիմնած կենցաղային հիմիայի խոշոր ձեռնարկության բացմանը: Պրն Ուզունյանն իր հերթին ասաց. «Այսօր սփյուռքը անկախ Հայաստանով է ապրում ու խրախուսվում»:

Վետերանները ծանոթ էին ՀՌԱԿ նախընտրական պլատֆորմի հիմնադրույթներին եւ գովեստով արտահայտվեցին դրանց մասին: Նաեւ իրենց խնդիրներն ուղղեցին ատենապետներին մասնանշելով բազմաթիվ ծերերի սոցիալապես անապահով վիճակը, անբավարար միջոցները, ինչը պատճառ հանդիսացավ, որպեսզի մարշալ Բաղրամյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ստեղծվող հուշարձանն անավարտ թողնվի: Այս ամենը նկատի առնվեց ՀՎ կողմից, իսկ հանդիպման ավարտին վետերաններին բաժանվեցին նվերներ:

ԼՈՒԻԶ ԲԱԲԱՅԱՆ

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՌԱԿ-ն ու վետերանները գործակցում են քաղաքականությունից անկախ

Վետերանների խորհուրդը հրավիրված էր «Թեմելյան» կենտրոն՝ մայիսի 9-ը տոնելու

Ամերիկյան ավանդույթներն ու հայի ներաշխարհը Դայանա Տեր-Հովհաննիսյանի պոեզիայում

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության նախընտրական միջոցառումներն առանձնանում են մշակութային ուղղվածությամբ եւ միջոցառումների բազմազանությամբ: Այս անգամ կուսակցությունը, Թեմելյան մշակութային միության եւ մի խումբ մտավորականների հետ համատեղ, հանդիսման էր հրավիրել ամերիկահայ բանաստեղծուհի եւ բարգմանչուհի Դայանա Տեր-Հովհաննիսյանին: Բանաստեղծուհին առաջին անգամը չէ, որ այցելում է Հայաստան, իսկ այցելությունները հիմնականում գործնական են: Դեռեւս 1994 թ.-ից տկն Տեր-Հովհաննիսյանը ծեռնարկել է երկու ծավալուն բարգմանչական աշխատանքներ, որոնցից առաջինը հայ ժամանակակից պոեզիայի ժողովածուն է, երկրորդը հայ բանաստեղծուհիների ինքնարերության: Ամերիկահայ ստեղծագործողը բարձր է գնահատված իր հայաստանցի գործընկերների կողմից, առաջարկը նրա նվաճած մի քանի գրական մրցանակներն են (Ցումանյանի անվան եւ Արցախի նախարարների խորհրդի սահմանած եղիշեի անվան), նրա անդամակցությունը Հայաստանի գրողների միությանը եւ, վերջապես, լեփ-լեցուն դահլիճն ու ջերմ ընդունելությունը Թեմելյան կենտրոնում: Բանաստեղծուհու բարգմանչական աղվեսը սերտորեն առնչվել է նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության նշանավոր դեմքերից մեկի բանաստեղծ Վահան Թեմելյանի պոեզիային: ԱՄՆ-ում կազմվել եւ հրատարակվել է Թեմելյանի բանաստեղծությունների հատընտիրը՝ բարձրորակ բարգմանությամբ:

Բացման խոսքը Սերգեյ Գալստյանինն էր, որը ներկայացնելով բանաստեղծուհուն եւ մյուս հյուրերին՝ բանաստեղծներ Մեսախին եւ Հենրիկ Էդոյանին, ծայնը տրամադրեց առաջինին: Տկն Մեսախեն շարադրեց Դայանա Տեր-Հովհաննիսյանի կենսագրությունն ու գործը, ինչից տեղեկացանք, որ բանաստեղծուհու հայրը եղել է ֆիդայի Անդրանիկի զինակիցը, որ բարգմանչական ու ստեղծագործական աշխատանքը Դայանան սկսել է հոր դրդումով, որ մեծն Վիլյամ Սարոյանը, ընթերցելով դեռեւս երիտասարդ աղջկա գործերը, գրել է «Կարդացեք Դայանային եւ ցնծացեք»: Անգլիալեզու եւ ամերիկյան դասական գրականության լավագույն ավանդույթներով դաստիարակված բանաստեղծուհու աղվեսը կատարելապես ներծծված է հայկական ընչով: սա էր ամփոփ բնորոշումը Մեսախեի կողմից տկն Տեր-Հովհաննիսյանին տրված: Վերջինս, ինչպես իմացանք Արեւաբաս Ավագյանի, Հ. Էդոյանի եւ այլոց խոսքերից, բավականին ճանաչված ու սիրված է ԱՄՆ-ում. նրա երկու գրքերի շնորհանդեսներին ներկա է եղել Սարոյանը, նրա գրքերը շատ են ընթերցվում եւ արագ են սպառվում: Ներկայումս Դայանան արդեն հեղինակ է ութ գրքերի, որոնցից են Հայաստանում եւս հրատարակված «Ընտրանի», «Ծաղիկների հուշիչ», «Ժամանակը կգա» ժողովածուները: Նա հեղինակ է ավելի քան տասը հատոր բարգմանությունների, ուր ընդգրկված են Քուչակի, Վարուժանի, Չարենցի, Տերյանի, Էմինի, Դավթյանի ստեղծագործությունները:

Բանաստեղծուհին Ամերիկայում հիմնել է Վարուժանի անվան ածենամյա գրական մրցանակը, որի դափնեկիրներից շատերն այժմ ճանաչված գրողներ են: Ինչո՞ւ Վարուժանի անվան: որովհետեւ Վարուժանի պոեզիան է բանաստեղծուհու պաշտամունքը:

Դայանա Տեր-Հովհաննիսյանը, ինչպես իր նախորդ այցելության ժամանակ, այժմ էլ ամերիկյան գրականության վերաբերյալ դասախոսություններ է կարդալու համալսարանի ուսանողներին:

Բանաստեղծուհու ստեղծագործությունների ընթերցումով հանդես եկան ճանաչված ասմունքողներ Ալեքսանդրա Խանումյանը, Վլադիմիր Աբաջյանը, Ժասմեն Գեւորգյանը, Գրետա Մեջլումյանը, իսկ բանաստեղծ Լիոդարիս Սարգսյանն ընթերցեց տկն Դայանային նվիրված իր բանաստեղծությունը: Այս ամենին ի պատասխան բանաստեղծուհին ջերմ խոսքեր հղեց ներկաներին:

Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երկրապահները միայն խենթ ու խելառ տղերք չեն

Վստահեցնում է Վազգեն Սարգսյանը

ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին մի քանի լրագրողներով հանդիպեցին կամերային երաժշտության տանը, ուր երկրապահները տոնական համերգով նշում էին Շուշիի ազատագրման 7-րդ տարելիցն ու Երկրապահի օրը: Զրույցը սկսվեց այն հարցով, թե ո՞վ է պրն Սարգսյանի բնորոշմամբ երկրապահը եւ ո՞րն է նրա առաքելությունն արդեն իսկ մեր օրերում պատերազմից հետո:

– Ներսը լիքը ցավ, ներսը լիքը պոռկում, խենթ, բայց մինչեւ Շարժումը, մինչեւ մեր նորօրյա պատերազմը բացահայտման տեղ չունեցած մարդիկ էին հիմնականում: Նրանք եւ ուսուցիչներ էին, եւ բանվորներ, եւ գրողներ, եւ գործարարներ... Միայն տպավորություն ստեղծվեց ի սկզբանե, թե երկրապահները հիմնականում խենթ ու խելառ տղերք են, որ ուրիշ ոչինչ չեն կարողանում անել, բացի կռվելուց: Բայց, փառք Աստծո, ժամանակը ցույց տվեց, որ երկրապահը ոչ միայն կռվի դաշտում կարող է հերոսություն անել, այլեւ խաղաղ զարգացումներում իր խոսքն ասել: Դեռեւս 1996-ին մի հարցազրույցի ժամանակ ես ասել եմ, որ մեր բանակը, որ երկրապահի հիմքի վրա ստեղծվեց, առաջ է անցել տնտեսությունից թե՛ իր ծավալներով, թե՛ իր որակով, թե՛ ամբիցիաներով: Եվ եթե տնտեսությունը թիկունքից չհասնի, մենք կունենանք նաեւ պաշտպանության խնդիր: Երեք տարի է անցել, սակայն, ցավոք սրտի, տնտեսության մեջ էական բարեփոխումներ չկան: Եվ դա է պատճառներից մեկը, որ երկրապահը մտավ տնտեսական, քաղաքական կյանք: Չպետք է դրան ցավով նայել:

Կա մեծ էներգիա, կա մեծ պոտենցիալ: Շատ կարեւոր է, թե այդ պոտենցիալն ինչ ուղղությամբ կօգտագործվի: Ես չափազանց կարեւոր եմ համարում «երկրապահը» որպես կազմակերպություն ստեղծելը, ամփոփելը:

Պատկերացրեք 4-5 հազար երիտասարդ վերադարձան ճակատից ու տեսան, որ իրենց տունն աղքատ է, որ մարդկանցից մի խումբ հարստացել է, իրենք մնացել են աղքատ, սեփականաշնորհումից ոչինչ չունեն, եւ այդ պայմաններում զենքը ձեռին, մահ տեսած երկրապահն ուղղակի անկառավարելի ուժ կարող էր դառնալ, եթե ինքն իրեն չկառավարեր, ինքն իրեն չամփոփեր, ինքն իր թիկունքին չկանգներ: Պետությունը չէր կարող այն ժամանակ կանգնել տղաների թիկունքին, հիմա ասենք՝ ճանաչելի կարծես թե կարգավորվում է: Երբ երկրապահը դարձավ հավաքական ուժ, դա ոմանց վախեցրեց, բայց մեզ հնարավորություն տվեց ասենք՝ զենքը ես վերցնել, երկրապահները վերջին երեք տարվա ընթացքում պետությանը հանձնել են շուրջ 2 հազար կտոր զենք: Դա մեզ հնարավորություն տվեց նրանց էներգիան ճիշտ ուղղորդել, տեղավորել աշխատանքի:

Հիմա երկրապահը կարծես թե հաղթականացված է, հաղթականացվածների մի մասն արդեն հանրապետական կուսակցության մեջ է, այժմ բաց, առանց բաճկելու մտել է հաղթականության մեջ եւ փորձելու է իր խոսքն ասել այնտեղ, որտեղով կվստահեն: Գործ կարող են անել, միայն պետք է վստահել, ուղղորդել եւ հնարավորություն տալ աշխատանքի: Սա է երկրապահը:

– Պրն Սարգսյան, դուք ասացիք, որ դժգոհ եք կառավարության տնտեսական քաղաքականությունից: Կարելի՞ է ենթադրել, որ եթե խորհրդարանում «Միասնությունը» մեծամասնություն ունենա, այսօրվա կառավարությանն անվստահություն կհայտնվի:

– Կառավարությանն անվստահություն հայտնելու կարիք չկա, ըստ Սահմանադրության, նոր Ազգային ժողովի ձեւավորման հետ կառավարությունը հրաժարական է տալիս:

Մեր տեղեկանքը: ՀՀ Սահմանադրության մեջ նոր Ազգային ժողովի ձեւավորման հետ կառավարության հրաժարական տալու մասին հոդվածի մեր փնտրտուքն ապարդյուն անցավ: Պրն Սարգսյանը հավանաբար նկատի ուներ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը, ուր ասվում է. «Կառավարությունը նորընտիր Ազգային ժողովի կամ իր կազմավորումից հետո խանգարյա ժամկետում Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր գործունեության ծրագիրը՝ Ազգային ժողովի նիստում դնելով իր վստահության հարցը:

Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը կարող է ներկայացվել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից՝ վստահության հարցը դնելուց խանգարս ժամվա ընթացքում...

Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չներկայացվելու կամ նման որոշում չընդունվելու դեպքում նրա գործունեության ծրագիրը համարվում է հավանության արժանացած:

Անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունվելու դեպքում վարչապետը հանրապետության նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին»:

– Իսկ ո՞ւմ կամ ի՞նչ ուժերի թիկունքում կառավարության կազմում:

– Ընտրություններից առաջ ոչ մի ճիշտ ժուռնալիստ ոչ մի ճիշտ գործչի այդպիսի հարց չի տալիս:

– Բայց գոնե սպիտակ կառավարություն դուք ձեզ համար պետք է կազմած լինեիք, չէ՞:

– Ցավոք սրտի՝ ոչ: Ամեն ինչ կախված կլինի նաեւ խորհրդարանում ունեցած ձայներից, տեղերից եւ այլն... Վերջին հաշվով, կառավարություն կազմում է ոչ թե խորհրդարանը, այլ նախագահը, մի մոռացեք փոխադարձ համաձայնությամբ: Պիտի ֆիքսվեն պատասխանատվությունները: Խորհրդարանի ու կառավարության այսօրվա ողբերգությունն այն էր, որ մեկը մյուսին չէր վստահում, մեկը մյուսի հետ որեւէ կապ չուներ: Այ, եթե նոր ձեւավորված խորհրդարանը նախագահի հետ կազմավորի նոր կառավարություն, որի համար պատասխանատու կլինի, նա էլ՝ սրա առաջ, երբ ձեւավորվեն ինստիտուտներն ու ֆիքսվեն պատասխանատվությունները, ամեն ինչ իր տեղը կընկնի:

– Մեկ հարց եւս, ինչպե՞ս եք գնահատում Վանո Սիրադեղյանի ձերբակալման փաստը:

– Մենք էդ մասին չէինք որոշել խոսել, երկրապահի օրն է այսօր:

ԱՐԱՄ ՊԱՊՈՅԱՆ

Մայիսը՝ հաղթանակների ամիս

Մայիսի 9-ն արցախցիների համար սոսկ հաղթանակի օր չէ, այլ նաեւ Շուշիի ազատագրման եւ ԼՂՀ պաշտպանության բանակի օրն է: Ստեփանակերտի անձրեւային եղանակը բնավ չխանգարեց արցախցիների տոնական տրամադրությանը, իսկ միջոցառումների համապարփակ ծրագիրը խիստ հագեցած էր:

Նախօրեին՝ մայիսի 8-ին, տեղի ունեցավ ԼՂՀ Աժ եւ կառավարության համատեղ նիստ, որտեղ ընդհանրացվեցին մայիսյան հաղթանակների խորհուրդն ու իմաստը՝ պետության անկախության ճանապարհին: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար մի խումբ զինծառայողներ արժանացան կառավարական շքանշանների ու մեդալների, արժեքավոր նվերների:

Հաջորդ օրը, մայիսի 9-ը սկսվեց Մեծ հայրենականի եւ արցախյան գոյամարտի նահատակների հուշահամալիր այցելությամբ: ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի գլխավորած կառավարական շքախումբը ծաղկեպսակներ դրեց հուշահամալիրի պատվանդանին: Այնուհետեւ ավանդույթի ուժով պատշգամբի խումբը եղավ Շուշիում, որտեղ ծաղիկներ դրվեցին «Տանկ հուշարձանին», եղան այցելություններ նաեւ Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հուշաքարին, Արցախյան թեմի առաջնորդարան, ս. Ղազանչեցոց եկեղեցի:

Հարուստ էր մայրաքաղաքում կազմակերպված «Միայն հաղթանակ» տոնի ծրագիրը՝ հայկական էստրադային աստղերի մասնակցությամբ: Երեկոյան վերածննդի հրապարակում տեղի ունեցավ տոնական համերգ, որը կազմակերպել էին քաղաքային համույթները եւ վերջերս անցկացված «Ամաղեուս» երաժշտական փառատոնի պատանի դափնեկիրները: Ուշ երեկոյան տրվեց տոնական հրավառություն:

ԳԵՎՈՐԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

digitised by A.R.A.R.@

ազգային

Ժառանգություն. Ցեղասպանության ժառանգորդները

Այսպես էր վերնագրվել կոնֆերանսի նիստերից մեկը, որը, կարծում եմ, ամենազգայուն լսարանն էր հավաքել: Նախ խոսեց Բելգիայի Սենատի անդամ Ալան Դեսեքսը, որը հայերի եւ Ռուանդայի թութսիների ցեղասպանության ճանաչմանն անդրադարձավ: «20-րդ դարում 3 ցեղասպանություն է եղել հայերի, հրեաների, թութսիների, 3 դեպքում էլ նոյասակն աշխարհի երեսից ողջ ցեղի ոչնչացումն էր: Չպետք է չարաշահել ցեղասպանման հարցը, ասաց դեսպանը՝ հիշեցնելով, թե հաջողություն էր, որ հարցը ներկայացվել էր մարդու իրավունքների կոմիտե ոնանահարման, մարդկային ողբերգության անկյունից:

Հայտարարվեց, որ մայիսի 12-ին Ֆրանսիայում քայլարշավ կլինի, Սենատի առջեւ կհամախմբվեն հայեր՝ Հայոց ցեղասպանության ճանաչման համար: Մխիթարյան միաբանությունից հայր Հարություն Պզտիկյանը հաղորդեց, որ Իտալիայի 50 քաղաք ընդունել է Հայոց ցեղասպանությունը, եւ հարցը պիտի ներկայացվի կառավարությանը:

Դավիթ Այուսմինը: «Ես հպարտ եմ, որ հրավիրված եմ», ասաց նա: Տեղեկացնելով, թե աշխարհի բոլոր երկրներում ապրում են իր հրեա եղբայրները, նա բացատրեց՝ ինչպես եւ ինչու են հրեաները հրեա մնում: «Ես չեմ ուզում անհետանալ, ուզում եմ ինտեգրացման մեջ էլ հրեա մնալ», ասաց նա՝ առաջարկելով, որ հայ եւ հրեա ղեկավարների հանդիպում լինի:

Ամերիկայի հայկական համագումարից ելույթ ունեցավ Արփի Վարդանյանը: Նա ներկայացրեց, որ Վաշինգտոնում գործող իրենց գրասենյակն աշխատում է Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովրդի համար, հավաքը, մի նմանություն էր գտել՝ տարիներ առաջ ես էլ ձեզ նման զարած մտա այս մրցանոցը: Լոբբիզմը բացասական բան չէ, ինչպե՞ս ազդեցություն թողնել այս մրցանոցի վրա: Այնուհետեւ հոեսորը սկսեց դասախոսություն կարդալ լոբբիինգի տեսության վերաբերյալ: Ահա այն հինգ կետերը, որոնք սովորեցնում են ճնշում գործադրել, ասաց նա: Նախ չպետք է կարծել, որ հակառակ կողմը միասարր բլոկ է, որի վրա ազդել չի կարելի, ճեղքմիշտ կարելի է գտնել: Պիտի ընդունել, որ լոբբիինգն անբարոյական բան չէ, այլ ժամանակակից ժողովրդավարության բաղկացուցիչ տարր է: Ամերիկայի հայկական համագումարի նվիրյալ բնութագրումը նյութիս համար հնարավոր վերնագիր էր Բրյուսել մտնելու հենց սկզբից: Մեծ քաղաքականությանն արձագանքող ժամանակակից բարձրախոսների առջեւ մենք անցյալի ծանր պարկն ուսերիս, ժողովրդավարության օդապարիկի դեռեւս անվայրէջ դանդաղ ընթացքի մեջ: Մեծ մայրաքաղաքի մեծ բեմ մտնելու մեր վարանոտ քայլը գերմանացի քաղաքական գործչի աչքից էլ չէր վրիպել: Այդուհանդերձ բազմիցս ասվեց՝ այս մեծ բեմում դուք օտար չեք, մտեք, մենք ձեզ սպասում ենք: Մուտքի համար վճարելու պատեհ առիթ կա: խորհրդարանական ընտրություններում մեր որդեգրած սկզբունքները ձերը դարձրեք: Եվրախորհրդարանում ապրիլի 29-30-ը կայացած «1999. Հայերը դարաշրջանի բեմին» կոնֆերանսի մասին արդեն պատմել ենք համառոտ: Ինչպես խոստացել էինք, ստորեւ մեր առանձնահատուկ անդրադարձը կոնֆերանսի առանձին պահերին:

3000 տարվա պատմություն. Լավ սկիզբ: Հայոց լեզուն եւ մշակույթը

Այս նիստում խոսվեց թե հուշարձանների պահպանության, թե սպորտի, թե գրահրատարակչական գործի, թե հայկական դպրոցի մասին: Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի լեզվաբան Անահիտ Տոնապետյանը (Ֆրանսիա) ավարտին այսպես գնահատեց՝ նիստն ավելի շատ հարցեր տվեց, քան պատասխաններ:

Հրանցիկ հայացք արծարծված խնդիրներին: Հայր Հարություն Պզտիկյանը, որն ընդգծված ընտրեց հայերենն իբրեւ ելույթի լեզու, ներկայացրեց այն մշակական աշխատանքը, որ տանում է Մխիթարյան միաբանությունը 300 տարի շարունակ: «Միակ միաբանությունն է, որ ծնավ մշակույթին ծառա լինելու, ասաց հայր Հարությունը, 6000 ձեռագիր ունենք, ահա հարգանք մշակույթի նկատմամբ»: Նրա տեղեկացմամբ, Իտալիայի հեռուստատեսության հետ շուտով մեկնելու է Հայաստան Հռոմի պապի այցը լուսաբանելու, նախկին ԽՍՀՄ տարածքի առաջին երկիրն է, որ պապն այցելում է, եւ կոչ արեց օգտվել այդ պատեհ առիթից՝

ՀՀ դեսպան Ալոյս Մելիք-Շահնազարյանը խոսեց ապագա համահայկական խաղերի կարեւորության մասին, նա հեռու անդրադարձ արեց, նավասարդյան խաղերից հասավ մինչեւ գալիք համահայկական խաղերը, բոլորին հրավիրեց ներկա լինել, տեղեկացնելով, որ Շառլ Ազնավուրը ընտրվել է պատվավոր նախագահ, իսկ ՀՀ ԿԲ-ը խաղերի խորհրդանշով 5000 դրամանոց է շրջանառության մեջ դնելու:

Հոլանդահայ Նուբար Սեպոյանը հայկական դպրոցի հոգսերին անդրադարձավ: Պետության հովանավորությունը վայելող հայկական դպրոցներում դասագրքերի խնդիրը պիտի շուտափույթ լուծում գտնի:

Սփյուռք. Լավել Եվրոպայում եւ աշխարհում

Թեպետ կոնֆերանսին շատ խոսվեց լոբբիստական աշխատանք ծավալելու մասին, բայց դա կոնկրետ ելույթների, վիճարկման նյութ դարձավ հենց այս վերնագրով նիստում: Հրավիրյալների թվում էր Բելգիայի հրեական համայնքի նախագահ Դավիթ Սյուսմինը՝ հիշեցնելով, թե հաջողություն է, որ հարցը ներկայացվել է մարդու իրավունքների կոմիտե ոնանահարման, մարդկային ողբերգության անկյունից:

«Ամեն մի երկիր մեզ տրամադրելու պետական միջոցներ ունի: Իհարկե, աշխատանքը շատ-շատ դրամը կկարոտի, բայց ես դեմ եմ, որ մի քանի հարուստ հայ ֆինանսավորի», կարծիք հայտնեց շվեյցարահայ լրագրող Վիգեն Չքրյանը: Նա դժգոհեց, թե դեռեւս հայկական հարցի հանդեպ չկա պրոֆեսիոնալ վերաբերմունք: «Հայկական հարցը մեր ժամանցն է, եւ եթե 84 տարի չենք կարողացել Հայոց ցեղասպանությունը Եվրոպայում ճանաչել տալ, ձախողել ենք, չենք խոսում հայերեն, ձախողել ենք»: Պրն Չքրյանը Պիտեր Բալաքյանի «Ճակատագրին սեւ շունը» գիրքն ակնարկելով, առաջարկեց մշակույթի միջոցով հայի դրական կերպար ստեղծել, նաեւ մտածել, թե ինչպես օտար մամուլի հետաքրքրությանն արժանանալ, ինչպես միշտ ներկա լինել այնտեղ: Եղան տարբեր առաջարկներ, Անահիտ Տոնապետյանը կողմ էր Եվրոպայում մամուլի գրասենյակ բացելուն: Խոսվեց նաեւ, թե կոնֆերանսի լավագույն արդյունքը կլինի Ամերիկայի հայկական համագումարի նման մի կառույցի ստեղծումը: Ահա մի երրորդ կարծիք էլ՝ ինտեգրացվենք, որ ավելի հզորանանք: Երբ ելույթներում գերակշռող դարձավ հրեաների հետ համեմատությունը, «Նուվել դ'Արմենիի» խմբագիր Արա Թորանյանը չդիմացավ՝ «Համեմատենք այն, ինչ համեմատելի է: Եվրոպայի պատմության մեջ ավելի փիչ ենք ներկա, քան հրեաները, մեր ցեղասպանությունը տեղի է ունեցել ոչ թե Եվրոպայում, այլ Թուրքիայում: Ֆրանսիայում մի քանի 1000 մարդ է համայնքների կյանքով զբաղվում, համայնքների ներսում ավելի ժողովրդավար մեթոդներ որդեգրենք»:

Եվրախորհրդարանի նախկին անդամ, գերմանացի Ֆրանկ Շվալբա-Հոթը, որ կազմակերպչական աշխատանքով պայմանավորված ավելի շատ էր «խկում» հայկական հարցը՝ ասելով, թե հարցը ներկայացնում է ԱՄՆ-ի շահերի ներքո: «Մենք անկուսակցական կազմակերպություն ենք», որակեց Արփին խորհուրդ տալով ստեղծվելիք համապատասխան եվրոպական կառույցին ապաքաղաքական լինել: «ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն մեծ ջրի մեջ փոքր ձկներ են», ասաց ԱՀՀ-ի ներկայացուցիչը՝ շեշտելով, թե առանց մեծ փողի հնարավոր չէ կամավորներին աջակցել

ԱԶԳ

Միջազգային

– Պրն դեսպան, Ձեր անձնական կարծիքը մեր երկու երկրների միջեւ անկեղծ եւ իրատեսական երկխոսության հասցեագրման հնարավորության առնչությամբ:

– Միջազգային համաժողովները մեր ոլորտներ համար շփման առիթներ են ստեղծում: Դրանք նաեւ ամենաբարձր մակարդակի հանդիպումների հնարավորություն են ընձեռում: Այսպես, մեր երկու երկրների նախագահները Հայաստանի նոր վարչակազմի կողմից վերոհիշյալ ծրագրի մերժումը հանգեցրին Մինսկի խմբում վարվող բանակցությունների վերաբերյալ մտահոգությունների: Պետք է այս նկատառումները հաշվի առնել բանակցությունների ներկա փուլն ընթանալու համար:

Ճշմարիտ է, որ այդ հակամարտության լուծման բացակայությունը բացասաբար է ազդում տարածաշրջանի երկրների եւ մասնավորապես Թուրքիայի ու Հայաստանի հարաբերությունների վրա: Կարեւոր է, որ հայկական կողմը դրական քայլեր ձեռնարկի բանակցությունների առաջխաղացման համար:

– Ձե՞ք կարծում արդյոք, թե հայ-թուրքական համալսարանական եւ մշակութային կապերի ծավալի ընդլայնումը կնպաստեր մեր քաղաքական հարաբերությունների բարելավմանը:

– Կուզենայի ընդգծել այդ բնագավառում արդեն կատարված քայլերը: Օրինակ, Երեւանի պետական համալսարանի ռեկտորի գլխավորությամբ 1999 թ. փետրվարի 16-19-ը մի պատվիրակություն Անկարա է այցելել թուրքական հեղինակավոր համալսարաններից մեկի հրավերով: Այդ առիթով երկու համալսարանները ստորագրել են համագործակցության արձանագրություն: Հայաստանի պետհեռուստատեսության մի խումբ աշխատակիցներ բազմաթիվ նկարահանումներ են իրականացրել Թուրքիայում իրենց վերոհիշյալ այցի ժամանակ: Իմ կարծիքով, այդ կարեւոր նախաձեռնությունը նպաստում է Հայաստանի հանրության կողմից Թուրքիայի ավելի լավ ճանաչմանը: Մեր հարաբերությունների կանոնավորումը կիրականանա նման ջանքերի շնորհիվ:

– Դուք լավ գիտեք, որ Հայաստանի իշխանությունները 1915 թ. ցեղասպանության ճանաչումը նախապայման չեն համարում հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների վերահաստատման համար, սակայն արտասահմանցի բազմաթիվ քաղաքական գործիչներ դա անհրաժեշտ պայման են դիտում Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության համար: Արդ, այդ ճանաչումը օգտակար չէ՞ր լինի մեր երկու երկրների համար, մանավանդ որ դա բնավ չի պարտավորեցնում Թուրքիայի ներկայիս իշխանություններին:

– ...

– Ինչպե՞ս եք պատկերացնում Օջալանի դատավարության ընթացքը, որը լրջորեն մտահոգում է միջազգային հանրությանը:

– Օջալանի դատավարության արդար կամ անարդար լինելուն վերաբերող երկյուղներն անհիմն են: Թուրքիայում արդարադատությունն անկախ է: Այդ սկզբունքը գրի է առնված Սահմանադրության մեջ եւ որեւէ բացառություն չի հանդուրժվում: Այսպիսով, Թուրքիայի մյուս բոլոր քաղաքացիների նման, Օջալանն արդար դատի իրավունք կունենա:

Եվրախորհրդի անդամ երկրներում դատավարությունները բաց են ու թափանցիկ: Ամեն մեղադրյալ իրավունք ունի ազատորեն ընտրելու փաստաբաններ, որոնք կպաշտպանվեն իր պատշաճությունը:

– Ներկայումս Թուրքիայի ներքին իրադրությունը հարուցում է օտարերկրացիների անվտանգության հետ կապված խնդիրներ: Ինչպե՞ս եք պատկերացնում այդ իրավիճակի ելքը:

– Այդ պնդումը բխում է մի կազմակերպությունից, որը համարվում է բռնությունների եւ կազմակերպված հանցագործությունների գծով աշխարհում ամենավտանգավորներից մեկը: Այդ նույն կազմակերպությունը ահաբեկման նման արշավներ էր ծավալել, որոնց թիրախն անցած տարիներին արտասահմանցիներն էին: Ավելի ճիշտ կվարվեիք, եթե այդ հարցն ուղղեիք հիշյալ կազմակերպության անդամներին, որպեսզի պարզեն նրանց նոր դիտավորությունները:

Իր կողմից Թուրքիան այդ սպառնալիքների հետ կապված ապահովության միջոցներ է ձեռնարկում եւ տարեցտարի կարողանում է խաղաղ եւ անվտանգ պայմաններ ստեղծել աշխարհի բոլոր շրջաններից եկող զբոսաշրջիկների համար:

– Այս տարվա ապրիլի 18-ին Թուրքիայում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Դրանք կարող են հանգեցնել Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխման:

– Ապրիլի 18-ին թուրք ժողովուրդը ժողովրդավարական կերպով արտահայտեց իր կարծիքը: Նոր կառավարությունը ներկայացրեց իր ծրագիրը, մասնավորապես արտաքին քաղաքականության բնագավառում: Այդ քաղաքականությունն ունի մի քանի հատկություն, որոնք կապված են երկրի եւ շրջակայքի քաղաքական, տնտեսական, աշխարհագրական իրողությունների հետ: 1923 թ. իր ստեղծման պահից Թուրքիան վարում է համակողմանի, իրատեսական եւ բազմակողմանի քաղաքականություն, որի նպատակն է խաղաղության հաստատումն ու պահպանումը, հիմնվում է միջազգային իրավունքի հարգման, վեճերի խաղաղ լուծման, բարիդրացիության եւ պետությունների տարածքային ամբողջականության ու քաղաքական ինքնիշխանության հարգման վրա:

Սառը պատերազմին հաջորդած վերջին տասը տարիներին հարեւան երկրներում տեղի ունեցած խոշոր փոփոխությունները Թուրքիային ստիպեցին շեշտը դնել իր տարածաշրջանային արտաքին քաղաքականության վրա: Բացի դրանից, նա փորձեց վերջինս հարստացնել տնտեսական եւ մշակութային գործոններով, միաժամանակ պահպանելով վերոհիշյալ գլխավոր սկզբունքները:

ԱՐՄԵՆ ԱՅՎԱՅԱՆ
Փարիզ

ՕԱՐԻՁ

Սյոնմեզ Քյոխալ. «Ակնկալում ենք հայկական կողմի դրական քայլերը»

Սյոնմեզ Քյոխալը (ծնվ. 1940 թ.) Փարիզում Թուրքիայի դեսպան է 1998 թ. ապրիլից: Ավելի վաղ 1986-90 թթ. դեսպան է եղել Բաղդադում, 1991-92 թթ. Եվրախորհրդում Թուրքիայի մշտական ներկայացուցիչն էր: Զբաղեցրել է նաեւ այլ կարեւոր պաշտոններ: «Ազգի» թղթակցին նրա տված հարցազրույցը ներկայացնում ենք չնչին կրճատումներով: Ընդգծենք, որ դեսպանն անպատասխան է թողնում թղթակցի առանցքային հարցերից մեկը գլխավորը:

1998 թ. ամռանը Յալթայում գրուցեցին Սեւծովյան տնտեսական համագործակցության գագաթաժողովի առիթով: Իսկ Թուրքիայի պետնախարար Ռ. Շահինի գլխավորած պատվիրակությունը Երեւանում մասնակցեց նույն կազմակերպության արտգործնախարարների հանդիպմանը:

Առկա են կապեր նաեւ հայկական մամուլի հետ: Տարեսկզբին Թուրքիա այցելեց ՀՀ պետական հեռուստատեսության պատվիրակությունը:

– Ինչպիսի՞ ջանքեր պետք է գործադրվեն բարձր մակարդակով հայ-թուրքական հարաբերությունները վերականգնելու համար:

– Թուրքիան պաշտոնապես անխոնջ ճանաչել է տարածաշրջանում անկախացած բոլոր երկրները: Նա առաջիններից էր, որ ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Կարծում եմ, դա մեր բարի կամքի վկայությունն է: Այդուհանդերձ գտնում եմ, որ տարածաշրջանում Հայաստանի նոր ղեկավարության քաղաքականությունը եւ մասնավորապես պատմական որոշ մտասեւեռումների հաղթահարման անկարողությունը խոչընդոտում են մեր հարաբերությունների կանոնավորմանը:

Կարծում ենք, որ այս առումով հայ-ադրբեջանական հակամարտության լուծումը կամ դրական տեղաշարժը նույնպես կնպաստի այդ հարաբերությունների կանոնավորմանը: Իրոք, երկկողմ հարաբերությունները չեն կարող մեկուսացվել շրջանային իրողություններից եւ մասնավորապես տարածաշրջանի մյուս երկրների հետ Թուրքիայի հարաբերություններից: Համաձայնեք, որ անհնար է շրջանում բարելավել համագործակցությունը, երբ Ադրբեջանի տարածքի մեկ հինգերորդը գրավված է, եւ մեկ միլիոնից ավելի ադրբեջանցի գաղթականներ կան: Այս իրավիճակը, անկասկած, երկու երկրների հարաբերությունների բարելավման հեռանկարների վրա բացասաբար ազդող գործոն է:

– Թուրքիայի աջակցությունը վայելող Ադրբեջանը մերժում է Մինսկի խմբի ամեն մի առաջարկություն, որը փորձում է գտնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության փոխընդունելի լուծում: Ուրեմն ինչպե՞ս ապաշրջափակենք այս իրավիճակը, որը մեծ խոչընդոտ է մնում հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ճանապարհին:

– Ինչպես գիտեք, 1997 թ. Ադրբեջանն ընդունեց Մինսկի խմբի համանախագահների պատրաստած 3-կետանի ծրագիրը: Նույն թվականին նաեւ Հայաստանի կողմից այդ ծրագրի ընդունումը միջազգային հանրությանը մեծ հույսեր ներշնչեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առնչությամբ: Բայց Ղարաբաղի հայերի բռնած անզիջում դիրքը եւ ապա քաղաքական ոլորտում ստեղծված իրավիճակը հնարավոր կամ անհնարավոր լինելուն վերաբերող երկյուղներն անհիմն են: Թուրքիայում արդարադատությունն անկախ է: Այդ սկզբունքը գրի է առնված Սահմանադրության մեջ եւ որեւէ բացառություն չի հանդուրժվում: Այսպիսով, Թուրքիայի մյուս բոլոր քաղաքացիների նման, Օջալանն արդար դատի իրավունք կունենա:

Եվրախորհրդի անդամ երկրներում դատավարությունները բաց են ու

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարության դժվար երկունքը Իրանում

«Ազգի» ընթերցողներին հայտնի է ֆրանսիաբնակ քաղաքագետ, դասախոս եւ արեւելագետ Դասան Սալամեն: Արաբ մեկնաբանի վերլուծականն անդրադառնում է Իրանի Իսլամական Հանրապետությունում ընթացող վարչակազմի 2 թեւերի բարեփոխիչների եւ պահպանողականների ներքին պայքարին: Դոկտոր Սալամեի նյութը հեռաձակվել է RMC-ով:

Ա. Մ.

Իրանում իրարահաջորդ փուլերով շարունակվում է պահպանողականների եւ բարեփոխիչների առճակատումը: Դրա վերջին հանգրվանն այն է, որ պահպանողականներին չհաջողվեց վստահությունից զրկել նախագահ Խաթամիի ամենահայտնի օգնականներից մեկին՝ մշակույթի նախարար Աբդուլահ Մուհաջիրանիին, մինչդեռ նախկինում նրանք կարողացան դա անել նրա գործընկեր, ներքին գործերի նախարար Աբդուլահ Նուրիի նկատմամբ: Առճակատման յուրաքանչյուր հանգրվանում ձայներ են բաշխվում, թե սա վերջին ճակատամարտն էր 2 գծերի միջեւ: Սակայն, քաղաքական պատերազմը դարձյալ կրկնվում է խորհրդարանի, դատարանի եւ, նույնիսկ, ինչպես պատահեց անցյալ անգամ, սպանությունների միջոցով: Թերեւս հոսքերն այս հարաբերությունները տենդում տեսնում են խոր անզորություն՝ ներդաշնակելու համար պահպանողական մի քանի ինստիտուտներով մարմնավորված խոմեյնական հեղափոխության եւ ժողովրդավարության տրամաբանության միջեւ, որը պարտադրել է ռեֆորմիստական մի ծրագիր՝ գերազանց բարեփոխիչ նախագահի ղեկավարությամբ:

Բայց ես ավելի հակված եմ լավատեսների հայեցակետին, որոնք որոշակի աստիճանականություն են նկատում համաշխարհային տվյալների հետ Թեհրանի ընտելանալու գործում: Դրա դեմ, անտարակույս, ներքին հստակ արգելակում կա, որի ազդեցությունը, սակայն, ընդհանուր առմամբ նվազում է: Դրա դեմ են կանգնել նաեւ քաղաքացի ինստիտուտներ եւ վստահված շահեր, բայց դրանց ներգործությունը փոքրանում է: Եթե մեկը հաշվարկի նախագահ Խաթամիին հակադրվող բացահայտ եւ թաքուն ուժերի թիվը, ապա եզրահանգելու է նրա անխուսափելի ձախողումը: Սակայն Խաթամին չի բավարարվում գոյատեւմամբ, այլ մի դիմակայությունից մյուսին անցնելով հզորացնում է իր դիրքերը: Նա ոչ միայն կարողացավ ընտրություններում ջախջախիչ հաղթանակ իրականացնել, այլեւ շարունակում է վայելել ժողովրդի աջակցությունը: Նա կարողացավ ինքն իրեն անհրաժեշտություն դարձնել հենց վարչակարգի համար այնպես, որ Խաթամիից ազատվելու ձգտումը վերածվելու է դաժան առճակատման՝ վարչակարգի եւ ժողովրդի միջեւ: Ուստի խաթամիական փորձի հակառակորդները ջանում են այն շրջափակել, թուլացնել, դրա ներկայացուցիչներին հեռացնել կամ վարչակարգի տարբեր հաստատություններ թափանցումը կասեցնելու փորձ անել: Բայց, ամենայն հավանականությամբ, նրանք սկսեցին զգալ իրենց անկարողությունը: Հետեւաբար, ովքեր մտածում էին մրցակցել Խաթամիի հետ երկրի նախագահության համար, շուրջ 2 տարի հետո սկսեցին ձեռ քաշել նման ճակատամարտից, քանզի Խաթամիզմը դարձել է օրինակելի մի դպրոց, որը սովորեցնում է, թե ինչպես անզեն մի մարդ կարողացավ ժողովրդական լայն սատարումը փոխակերպել կառավարելու, ներգործելու եւ ղեկավարելու միջոցների:

Միջազգային տեսչություն Թբիլիսիի տանկերի վերանորոգման գործարանում

ԹԲԻԼԻՍԻ, 8 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Թբիլիսի ժամանած օտարերկրյա զինվորական փորձագետների խումբը միջազգային տեսչություն է իրականացնում Անդրկովկասում Ռուսաստանի զորախմբի (ԱՌԶԽ) տանկերի վերանորոգման գործարանում: Այդ մասին հաղորդել է ԱՌԶԽ-ի հավաստի աղբյուրը: Մինչեւ մայիսի 10-ը փորձագետները կստուգեն Ռուսաստանի կողմից Եվրոպայի սովորական սպառազինությունների մասին համաձայնագրի կատարման ընթացքը:

Փորձագետների խմբում ընդգրկված են 6 ներկայացուցիչ Թուրքիայից, մեկական ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Բելգիայից եւ Հոլանդիայից: Տեսչության ընթացքում ռուսական կողմը ներկայացնում է ԱՌԶԽ-ի միջազգային պայմանագրերի իրացման բաժնի վարիչ գնդապետ Հայոզ Մկրտումովը:

Ամերիկյան տնտեսությունն աննախադեպ աճ է ապրում

Ամերիկյան տնտեսությունը նոր ցուցանիշի հասավ. Դոու Ջոնսի ինդեքսը գերազանցեց 11 հազարի սահմանագիծը: Հիշեցնենք, որ այս ինդեքսը հաշվարկվում է Նյու Յորքի Ֆոնդային սակարանում հիմնական ընկերությունների բաժնետոմսերի փոխարժեքի աճի հիման վրա, ինչքան բարձր է ցուցանիշը, այնքան նշանակում է բարձր է գործարար ակտիվությունը, բարձր են ընկերությունների շահույթները, եւ լավ են ամերիկյան տնտեսության գործերը: Միացյալ Նահանգները այժմ նախանձելի վիճակում է. վերջին տարիների ընթացքում տպագիր եւ գործազրկության ամենացածր մակարդակ, պահանջարկի ամենաբարձր մակարդակ: Ինչպե՞ս կարելի է բացատրել հանգամանքը, որ աշխարհում տնտեսական ճգնաժամը դեռ շարունակվում է, իսկ ԱՄՆ-ը ծաղկում է: Իսկ կարո՞ղ է այնպես լինել, որ ԱՄՆ-ի տնտեսական զարթոնքը տարածվի նաեւ այլ երկրներ, մասնավորապես Ռուսաստան:

Առաջին հարցի պատասխանը մի փոքր պարադոքսալ է հնչում, հենց համաշխարհային ճգնաժամի շնորհիվ է ծաղկում ԱՄՆ-ի տնտեսությունը: Ընկան Ասիայի շուկաները, ներդնողները վազեցին ԱՄՆ: Ռուսաստանը օգոստոսի 17-ի ճգնաժամի պտուղներն է ճաշակում մինչեւ հիմա, եւ միլիարդավոր դոլարներ վերադարձան իրենց պատմական հայրենիք:

Վատթարագույն Բրազիլիայի վիճակը, ներդնողները կրկին կապիտալը տեղափոխեցին Նահանգներ: Բալկանյան իրադարձությունները եվրոպական շուկան կապիտալ ներդրումների համար նվազ հրապուրիչ են դարձրել, եվրոն օր-օրի ընկնում է, դրանը կրկին առաստաղ է փնտրում ԱՄՆ-ում:

Ճիշտ է, այս ամենը նաեւ վտանգ է պարունակում: ԱՄՆ-ի Ֆոնդային շուկան այժմ «գերտաքացած է», մասնագետներն այսպես են բնութագրում այն վիճակը, երբ արժեթղթերի փոխարժեքը աճում է ավելի արագ, քան դիվիդենտները: Դա նշանակում է, որ տնտեսությունն այս քանակության փողը «չի մարսում», չի հաստատում ներդնել արտադրության մեջ: Ֆոնդային շուկան ուռել է, ինչպես պղպջակը, եւ առանց հատուկ կարգավորող միջոցառումների մի օր կարող է պայթել:

Եթե Ռուսաստանն ապացուցի իր հուսալիությունը, ապա հնարավոր է, որ սպանա կապիտալի ամերիկյան շուկայում «ավելորդ» փողի մի մասը: Սակայն դրա համար անհրաժեշտ է նվազագույնն ապահովել քաղաքական եւ տնտեսական կայունությունը, ճշտորեն վճարել պարտքերը, երաշխավորել ներդնողների իրավունքների պատշաճությունը:

«ԿՈՍՏՈՊՈԼՍԿԱՅ ՊՐՈՎՈՍ»

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Գեղեցկությանը սիրահարված մարդը

Սերգեյ Փարաջանով-75

Փարաջանով մարդու եւ արվեստագետի կերտարն ու անձը այնքան ողբերգախոս են, որ թվում է, թե ֆիլմերում կամ առհասարակ նրա մասին խոսելն արդեն ավելորդություն է: Ուրեմն, ինչպես վարվել՝ լռե՞լ, հիշելով, որ «լությունն ավելի ողբերգախո՞ս է»: Իրար հակասող տրամադրությունների ու ցանկությունների միասնությունը միայն կարող է, բեկուզ ժամանակավորապես, հավասարակշռել մեր իրարամերժ ապրումները: Թերեւս այդ է պատճառը, որ Փարաջանովի ծննդյան 75-ամյակի առիթով երեւանի կինոյի տանը ցուցադրվող վավերագրական ֆիլմերը դիտելիս մեզ հասկանում էին խառնիխուռն զգացումներ: Հեղինակների մոտեցումները տարբեր էին եւ ամբողջության մեջ ինչ-որ տեղ լրացնում էին միմյանց:

Ճիշտ է, կան հանճարեղ օեժիսորի հրաշալի ֆիլմերն ու կոլաժները, բայց երբ էկրանին նոր տեսնում իրեն Փարաջանովին, հասկանալի է դառնում, թե ինչու է անհնար լռելը: Այդ արտասովոր մարդու, աներեւակայելիորեն ազատ մարդու մագնիսականությունն ունի ուժգնություն, որը հաղթահարելու համար պետք է նույնքիսի ուժգնության հասնող անհերթեր անտարբերություն ունենալ: Այնուամենայնիվ, այն համակարգը, որի օրոք ապրեց ու ստեղծագործեց «մեծ միստիֆիկատորը» (այդպես էլ կոչվում էր նրա մասին պատմող ֆիլմերից մեկը, ուր ոչ մի կադրում հերոսը չհայտնվեց), Փարաջանովին նրա ազատությունը չներելով որոշեց փշրել այն: Մի առիթով Տարկովսկին ասել է, որ ազատ մարդը բանտում էլ է ազատ: Իսկ Փարաջանովի ազատությունը սահման չուներ, ու որքան դա ակնհայտ էր դառնում, այնքան ավելի ահագնանում էր ոչնչացնել կանգնող ուժը:

Կյանքի վերջին ամիսների շաս տեսագրություններ ասես վկայում են, որ նրա մեջ ինչ-որ բան, այդտեղ հանդերձ, կոտրվել էր, մի լար էր կտրվել: Մյուս կողմից տեսնում ենք, որ գործ ենք ունեցել այն կարգի հանճարի հետ, որի ներսում Աստծո ձեռքով բարձված գործիքի լարերից անգամ մեկի պահպանման դեպքում պիտի հնչեր գեղեցկության մեղեդին:

Հիրավի, չհաջողվեց ոչնչացնել Փարաջանովի ձգտումն առ գեղեցկություն: Իսկ նրա ազատությունը հենց այդ ձգտման մեջ էր, նրա ազատությունը գեղեցկություն արարելու մեջ էր՝ ամենաառօրեական, ամենակենցաղային, նույնիսկ դեն շպրտված իրերից՝ անսպասելիորեն հրաշքով ծնված գեղեցկություն:

Փարաջանովի համար գոյություն չուներ կյանքի եւ արվեստի սահմանը: Նա իբրեւ կինո էր ապրում կյանքը՝ գիտակցված, թե չգիտակցված կատուցելով յուրաքանչյուր դրվագ: Ու մտերիմների, շրջապատող մարդկանց համար էլ, ուզած-չուզած, հաճախ էր ջնջվում վերոհիշյալ սահմանը:

Դեռ կշարունակվեն վեճերը, թե որքանով է Փարաջանովի ստեղծած աշխարհն առնչվում զուտ կինեմատոգրաֆին: Փարաջանովն ինքն իր ստեղծագործություններ հետ մեկտեղ պետք է դիտվի որպես թե՛ կինեմատոգրաֆիական երեւույթ, թե՛ պատկերի, երաժշտության, պարի ու գույնի անզուգական համադրման արարիչ:

Մեծ կինոռեժիսորին նվիրված ֆիլմերում, տարբեր տեսանկյուններից առաջ գալով, ասես հավաքվում ու ամբողջանում էր նրա դիմանկարը: Մի տեղ նա հաճույքով էր կանգնել կինոխցիկի առաջ, մեկ ուրիշ տեղ՝ այնպես էլ թույլ չտվեց, որ իր կողմն ուղղեն: Ռեժիսոր Դոբրովոլսկու ֆիլմում հնչում էր անհերեւակայելի կոլորիտ ունեցող այդ մարդու միայն խոսքը... Հիասթափություններ առած, տխրությամբ լցված, մի փոքր դառնացած Փարաջանովի խոսքը շարունակում էր հնչել, իսկ կինոխցիկը գտել էր իր ելքը. սահում էր փարաջանովյան արվեստի աշխարհի անկրկնելի նմուշների վրայով, փորձում բռնել նաեւ դրանցով հեռաթռչող, ցուցահանդեսի օրերին դրանք տեսնելու եկած մարդկային հոսքը: Այցելուների մի մասը տոմս էր գնում, մյուսները՝ ատիճաններով վերուվար անում:

Ալեքսանդր Կայդանովսկու ֆիլմում արդեն Փարաջանովը զարմանալիորեն ենթարկվում էր «իրեն ներկայացված պահանջներին»՝ երբ հայտնվել վարագույրի կամ դռան հետեւից, երբ սենյակ մտնել, ուր նստել, համերաշխությամբ լսում էր տրված հարցերը ու անմիջապես պատասխանում էր կամ խոստովանում, որ չի կարող, չի գտել պատասխան:

Այսօր, երբ երկուսն էլ չկան, առանձնահատուկ ցավով է դիտվում ֆիլմը: Սնդրեյ Տարկովսկու «Սալկեր» ֆիլմում գլխավոր հերոսին մարմնավորած վաղամեռիկ Կայդանովսկին իր ֆիլմում արդեն Փարաջանովի համար է ներկայանում որպես «հույսի նահատակ» ու հարցնող, որ ուղեկցում է հանճարին, այս անգամ նրա ներին «զոնայի» խոյընդոտներով:

Ալ. Սոքուրովի անվան օրդերի եւ բալետի պետական թատրոնում, մայիսի 7-ին, Սերգեյ Փարաջանովի ծննդյան 75-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյի ժամանակ շնորհվեցին մրցանակներ: Կայդանովսկու «Փարաջանով» ֆիլմն արժանացավ Հայաստանի կինոգետների եւ կինոլրագրողների ասոցիացիայի մրցանակին:

Կինոռեժիսոր Ռոման Բալայանի «Մի գիշեր Փարաջանովի բանգարանում» ֆիլմն անբառ էր, խաղաղեցնող: Կինոխցիկի հայացքը թափառում էր «արեւելքի երգչի» կոլաժների վրայով՝ հնագույն ճարտնական երաժշտության տակ: Ֆիլմն արժանացավ Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության սահմանած մրցանակին: Իսկ «Բոնզածույլ նուռը» շնորհվեց Ռուբեն Գեւորգյանցին՝ «Վերջին կոլաժը» ֆիլմի համար: Անվանի կինոավերագրողի ֆիլմն էկրանին հնչեց որպես Փարաջանովի՝ այդպես էլ չարտաբերված, անավարտ մնացած «խոստովանանք»՝ գուցե հետմահու, ընդգրկելով նաեւ նրա վերջին, անավարտ ֆիլմի՝ «Խոստովանանքի» առաջին դրվագները՝ նկարահանված Թիֆլիսում գտնվող հայկական տան բակում:

Վերջում հիշեցնենք բանաստեղծ Իոսիֆ Բրոդսկու խոսքերը. «Եթե Դոստոեւսկին ասում էր, որ գեղեցկությունը կփրկի աշխարհը, ապա Փարաջանովը որոշեց, որ պետք է փրկել գեղեցկությունը»:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆԸ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԱՅԴ ՄԱՐԴԸ ՎՃՌԵՑ ԱՅՆ ԲԱՆՏԱՐԿԵԼ ԻՐԵՆ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:

ԱՐԻԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԹԱՏՐՈՆ

Ողջերի հիշողության հավերժ խորհրդանիշը

Կալիֆոռնիայի Սանտա Բարբարա քաղաքի Սան Լուիզ Օբիսպո բանտն է, թվահամարով 7160 բանտախուցը, որը լուսավորված է լամպի թույլ դեղնավուն լույսով:

Լսվում են խառնիխուռն վայնասուններ ու բղավոցներ, մեկի հինախնդիր ծիծաղն ու ծանր շունչը:

Ծերունի (Գուրգեն Յանիկյան) բանտարկյալը բանտախցի երկաթե վանդակին կառչած, թվում է, հենարանի կարիք ունի, նրան հետաքրքրում է տագնապը: Նա փորձում է պատսպարվել ծանր շունչից եւ հինախնդիր ծիծաղից... Սակայն այդ ծիծաղը վերածվում է չարագուշակ քրքիջի՝ դաժանորեն խոցոտելով ծերունու լսողությունը:

Բանտախցի այդ սահմռկեցուցիչ անկյունում Յանիկյանին այցի է գալիս մոր հոգին, որն անընդհատ նախատում է. «Ինչո՞ւ սպանեցիր այդ թուրքերին»:

Ծերունու առջեւ պատկերվում է մի հարսանիք...

Հայտնվում են հրոսակները, լռում է երաժշտությունը, դադարում է պարը... արյուն է թափվել... Խնդրակատար ծառի ճյուղը ձեռքին ներս է մտնում մի կին... մի խենթ կին... ճյուղը կաթկթված է բազմագույն կտորներով: Նա մեկ երգում է, մեկ էլ իրեն կորցրած պտտվում՝ է, ցատկոտում, փորձելով ցույց տալ, թե ինչպես ջարդոտեցին իր յոթ ասլան զավակներին, ինչպես պղծեցին ու հոշոտեցին անմեղությունը իր հարսների ու դուստրերի:

Գ. Յանիկյանը սպանել էր երկու թուրք հյուպատոսների, եւ դա էր բանտում լինելու պատճառը: Նա իր եղբոր, իր ժողովրդի եւ բոլոր մայրերի վրեժն էր առել նրանց սպանելով:

Նա դատարանում պատմում էր ցեղասպանության մասին, որի ժամանակ հայերը բյուրավոր զոհեր տվեցին: Սակայն դատավորի կարծիքով այդ «մանրուքները» պատճառ չէին այդ ոճիրը գործելու համար:

Իսկ թուրք ուսանողը, որ՝ պիղծ խոսքեր էր ուղղում հայերին անվանելով նրանց մարդկային թափթփուկներ եւ՝ ապերախտ խոզերի հավաքածուներ, պնդում էր. «Ո՞վ անպատված թվառականներ, կամ նուսուլման պետք է դառնաք եւ ընդունեք ճշմարիտ կրոնը եւ կամ աշխարհիս երեսից ձեզ պիտի ոչնչացնենք»: Յանիկյանին դատապարտում են ցմահ բանտարկության: Ու նորից մոր լուսավոր հոգին այցի է գալիս որդուն եւ ասում. «Նրանք քեզ մահվան չդատապարտեցին, որ չդառնաս խորհրդանիշ... Բայց դու արդեն դարձել ես քաջերի խորհրդանիշ... Դու եւ մյուսները, որոնք քաջերի քաջերն էին»:

Գալիս են ֆիդայիները, իրենց հպարտ պարով ու երգով հաղթական. «Ազատության սուրբ հացն այսօր պիտի վաստակենք մեր արյունով, ազատության բանկ գինը մեր կյանքն է այսօր, կյանքն է այսօր»:

Թվում էր երազի մեջ եմ, կարծես ցնորված լինեմ, ծերքերս դողում են հուզմունքից, եւ արցունքներս են մաքրում հոգուս խորքը: Վառվում են լույսերը եւ զգում եմ, որ երազ չէր, այլ «Հիշողության բեմ» ներկայացումը, որն իրականացվել էր «Նեմեսիս» բարեգործական հիմնադրամի եւ Հայկական ժողովրդային շարժման (ՀԺՇ) Հայաստանի ներկայացուցչության աջակցությամբ: Փաստագրական այդ ողբերգության գեղարվեստական ղեկավարն էր Աննա Պետրոսյանը, իսկ տնօրենը՝ Վազգեն Պետրոսյանը:

Խորհրդաս եւ իմաստալից այս բեմականացումը լի է իրական խոսքով եւ մտքով: Խորքն ունի, ազգային հույզեր է առաջացնում, մղում է քեզ դեպի համաշխարհային արժեքներ:

ՆԱՐԻԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ավանգարդիստներ: Հայկական գրոտեսկային ատրֆիա

«Հայ art» ցուցասրահում օրերս բացված «Մեծ ատրֆիա» ցուցահանդեսը վաղուց սպասված էր: Այն բացառիկ է որպես ցուցահանդեսների շարք իրականացնելու փորձ. Երեւանում, Թբիլիսիում, Վիլնյուսում եւ Մոսկվայում միաժամանակ ընթանում են բացառապես ավանգարդ արվեստագետների մասնակցությամբ նույն կերպ վերնագրված ցուցադրություններ: Ավելին՝ ներկայացված աշխատանքները մեծավ մասամբ հատուկ այս ցուցահանդեսի համար նախապատրաստված գործեր են, ինչպես, օրինակ, Կարեն Անդրեասյանի «Curriculum Vitae»-ն կամ Արեւիկ Արեւշատյանի եւ Ռուբեն Գրիգորյանի «Թավշյա անցումը»:

Ատրֆիային անդրադառնալու Ռուբեն Արեւշատյանի միտքը, որ երկու տարի առաջ դեռեւս միայն հինգ արվեստագետների աշխատանքներ ներկայացնելուն էր վերաբերում, իսկ այժմ շարունակական ցուցահանդեսների տեսք ստանալու հեռանկարներ ունի, սկիզբ է առել հստակ, այսինքն՝ իրենց նշանակությանը ծառայելու անընդունակ գործիքների թելադրանքով եւ ի վերջո «20-րդ դարասկզբից Եվրոպայում թեւածող հույսերի, գաղափարների ֆունկցիայազուրկ վիճակի մասին է, մեր մասին է»:

Մեր մասին են Ազատ. Վարսենիկ Խաթլամաջյանի, Հարություն Սիմոնյանի, Նարեկ Ավետիսյանի, Կարինե Մացակյանի գործերը:

Բառարանային բացատրությամբ հունական ծագում ունեցող ատրֆիա բառի փոխաբերական իմաստը զգայարանների եւ ոչ միայն անընկալողականություն, բթություն է նշանակում: «Ես կորցնում եմ իրականության ընկալումը: Գերհագեցված գույների խայտաբղետությունից, աղմուկի վերածված ձայներից, բուրմունքներից եւ համերի բազմազանությունից իմ զգայարանները կորցնում են իրենց հատկությունները», ասվում է ցուցահանդեսի կոնցեպտում: «Շարունակելով կարդալ մենք ընդամենը կարդում ենք տողատակերը. շարունակելով լսել մեր ականջը լռությունից բացի ոչինչ չի ընկալում»:

«Մեծ ատրֆիային» մասնակից երեւանյան ցուցադրության քառասունհինգ արվեստագետների համադրված գործերն անշուշտ ունեն աշխարհայացքի եւ ոճական զգալի տարբերություններ Նորայր Այվազյանի «Վեց բարձ» տարածական ինստալիացիան եւ նրա կողքին Արման Գրիգորյանի «Ամպրոպ» գործը ի վերջո արտահայտում են նույնը՝ նշանակությանը ծառայելու ունակությունից զուրկ վիճակը:

Թերեւս պետք է նշել, որ այս ցուցահանդեսում չկա կրող գործ, այսինքն յուրաքանչյուր աշխատանք պարում է ինքնուրույն, անկախ, իր սեփական ծայնային, գունային եւ գաղափարական հագեցվածությամբ առանց ճնշելու մնացածին: Ի դեպ, ցուցահանդեսն ինքնին, առանց այցելուի անգամ պարում է ինքնուրույն կյանք:

«Մեծ ատրֆիային» եւս բնորոշ է, ցավոք, մեզանում օրինաչափ դարձած մի երեւույթ. բացման արարողության առիթով հանդիսականների աշխույժ անցուդարձին հետագա օրերի ընթացքում հերթափոխում է հարաբերական ամայություն, երբ ցուցահանդեսն արժանանում է հատուկենտ այցելուների ուշադրությանը:

«Մեծ ատրֆիա» ցուցահանդեսի անդրադարձ պետքի տեսնել հրատարակվելիք կատալոգում, որտեղ Ռուբեն Արեւշատյանը նախատեսում է համախմբել ցուցադրությունների մասնակիցների գործերը: «Ցուցահանդեսն ունի շարունակական բնույթ, եւ այս մեկն առաջին փուլն է», ասում է ցուցահանդեսի համադրողը: Նա շեշտում է նաեւ, որ նախագիծն իրականացնելիս իրեն չի վերապահել խմբագրող լինելու ֆունկցիան. «Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել ցուցադրության տարածքը սա է»: Մինչդեռ Մոսկվայում կոնցեպտուալ դադրոցի ներկայացուցիչ արվեստագետները պերֆորմանսներ եւ արվեստի այլ գործողություններ կազմակերպել են բնակարանային պայմաններում իրենց ինտիմ միջավայրերում:

Ինչպես երեւում է, Երեւանի արվեստագետները նախապատվությունը տալիս են ցուցասրահային պայմաններին:

ՄԱՐԻԱՄ ԽՈՉԱՆԱՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀԱՕԿ

Քննարկվեցին հանձնաժողովների ծրագրերը

ՀՀ սպորտվարչության նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գործկոմի հերթական նիստը, որը վարում էր ՀԱՕԿ-ի նախագահ Բենուր Փաշայանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին վերջերս ստեղծված 11 հանձնաժողովներից 5-ի ներկայացրած ծրագրերը:

Օլիմպիական ակադեմիայի գլխավոր քարտուղար Հարություն Բաբայանի, մարկետինգի եւ տնտեսական կարգերի հանձնաժողովի նախագահ Գագիկ Չոբանյանի ներկայացրած ծրագրերում ընդգրկված էին մի շարք հետաքրքիր ուղղություններ, որոնց իրականացումը, ներկաների կարծիքով, մեծապես կնպաստի մեր ազգային օլիմպիական կոմիտեի հեռագա աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Հավանության արժանացավ բժշկական հանձնաժողովի նախագահ, բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր, «Մալաթիա» բժշկական կենտրոնի տնօրեն Արմեն Մելիքյանի ծրագիրը, որի շուրջ մտքերի փոխանակություն ծավալվեց:

Մշակույթի հանձնաժողովի նախագահ Հովհաննես Ավետիսյանն առաջարկեց կազմակերպել ՀԱՕԿ-ի օրհներգի եւ Տրոյա Առաջին թագավորի դիմանկարի մրցանակաբաշխություններ: Կարեւոր նախաձեռնությամբ հանդես եկավ վետերանների հանձնաժողովի նախագահ Գալուստ Ազիզյանը: Նա առաջարկեց սպորտի վետերաններին չմոռանալու, նրանց հարցերով զբաղվելու համար ստեղծել քարտադարան, ինչը շատ կարեւոր է նաեւ սերունդների դաստիարակության համար:

Ամփոփելով ներկայացված ծրագրերը ՀԱՕԿ-ի փոխնախագահ Միքայել Իսպիրյանը նշեց, որ բազմաթիվ հետաքրքիր առաջարկներ եղան: Գործկոմը հաստատեց հանձնաժողովների ներկայացրած ծրագրերը, իսկ մյուս վեցի ծրագրերը կքննարկվեն հետագայում:

Գործկոմի նիստում քննարկվեց նաեւ ամռանը Դանիայում կայանալիք երիտասարդական օրերին մեր պատվիրակության մասնակցության հարցը: Որոշվեց, որ Հայաստանի 16 ներկայացուցիչները հանդես կգան այդ մրցումների ծրագրում ընդգրկված 11 մարզաձեւերից 5-ում՝ ձյուդո, թենիս, բադմինտոն, սպորտային մարմնամարզություն, հեծանվային սպորտ: Պատվիրակությունը կգլխավորի ՀԱՕԿ-ի գործադիր տնօրեն Գագիկ Չոբանյանը:

Ազգային օլիմպիական կոմիտեի գործկոմի նիստում քննարկվեցին նաեւ «Սիդնեյ-2000» եւ «Օլիմպիական հերթափոխ» ծրագրերը: Մասնակիցները մարզիչների եւ մարզիկների կողմից արեցին մի շարք առաջարկություններ, եւ որոշվեց, որ դրանց վրա կաշխատի համապատասխան հանձնաժողովը:

Նիստի վերջում քննարկվեցին օգոստոս-սեպտեմբեր ամիսներին անցկացվելիք Համահայկական առաջին խաղերի հետ կապված կազմակերպական հարցեր:

Երկու առաջատար

Երեւանում, «Գրանդ» ակումբի մարզադահլիճում ընթանում են բասկետբոլի Հայաստանի տղամարդկանց առաջնության առաջին շրջանի երկրորդ փուլի նախնական հանդիպումները: Սա թե առաջին օրն ինչպիսի արդյունքներ գրանցվեցին. «Ասոմաս»-ք. Գյումրի՝ 81-46, ԴԻՄԱ-«Յուպիտեր»՝ 91-42, «Պոլիտեխնիկ»-ք. Արթիկ՝ 95-68, «Տոտուս-ԴԻՄԱ»-ք. Վանաձոր՝ 78-55: Երկրորդ օրը մրցումների առաջատարները կրկին հաջողության հասան. «Ասոմաս»-ք. Վանաձոր՝ 97-50, ԴԻՄԱ-«Տոտուս-ԴԻՄԱ»՝ 84-81, «Պոլիտեխնիկ»-«Յուպիտեր»՝ 85-60, ք. Գյումրի-ք. Արթիկ՝ 82-68: Այժմ, երբ երկրորդ փուլի ավարտին երկու տուր է մնացել, թիմերը մրցաշարում այսպիսի արդյունքներ ունեն. 1-2. «Ասոմաս», ԴԻՄԱ՝ 10-ական, 3-4. «Պոլիտեխնիկ», ք. Գյումրի՝ 8-ական, 5. «Տոտուս-ԴԻՄԱ»՝ 7, 6-7. «Յուպիտեր», ք. Արթիկ՝ 6-ական, 8. ք. Վանաձոր՝ 5 միավոր: Փուլի հաղթողը հայտնի կդառնա վերջին օրը, երբ կհանդիպեն երկու առաջատարները:

Հաջողություն Տվերում

Հայաստանի պատանի ձյուդոյիստները հաջող հանդես եկան «Տվերյան հույսեր» միջազգային մրցումներում: Տասնմի դուրս եկան 5 երկրների 38 թիմերի շուրջ 300 պատանի մարզիկներ: Նրանց թվում էին նաեւ մեր 13 ձյուդոյիստները, որոնցից 5-ը վերադարձան մեդալներով: Հաստատես հաջող հանդես եկան Երեւանցիներ Կարեն Հայկուսզյանը (46 կգ քաշային կարգ) եւ Սամվել Իրիքյանը (73 կգ), որոնք պարտության մատնեցին իրենց բոլոր մրցակիցներին եւ կանգնեցին պատվո պատվանդանի առաջին աստիճանին: Երրորդ մրցանակակիրներ դարձան Գուրգեն Բաղդասարյանը (Երեւան, 38 կգ քաշային կարգ), Արթուր Բարխուդարյանը (Վանաձոր, 50 կգ) եւ Արշոմ Գրիգորյանը (Երեւան, 55 կգ): Ինչպես նշեց հանրապետության երիտասարդական հավաքականի ավագ մարզիչ Դավիթ Խիքարյանը, մեր պատանի ձյուդոյիստներն իրենց լավագույն կողմերով դրսեւորեցին:

Չեմպիոնը բժշկական ուսումնարանի թիմն է

Պետհամալսարանի դահլիճում Հայաստանի չեմպիոնի կոչման համար մրցեցին վոլեյբոլիստուհիները: Բարձրագույն խմբի մրցաշարի չորս թիմերի պայքարում երկուսը՝ Երեւանի բժշկական թիվ 1 բազային ուսումնարանը եւ ԴԻՄԱ-ն վաստակեցին հավասար 5-ական միավոր: Հանրապետության չեմպիոնին որոշելու համար մրցաշարից մեկ օր անց այս թիմերի միջեւ լրացուցիչ խաղ անցկացվեց: Համառ պայքարում հաղթելով 3-2 հաշվով չեմպիոնուհու կոչումը նվաճեց ուսումնարանի թիմը: Երկրորդ տեղում է ԴԻՄԱ-ն, երրորդում Արթիկի հավաքականը:

Տղամարդիկ դեռ պետք է որոշեն հանրապետության չեմպիոնին: Կիսաեզրափակիչ խաղերում հաջող հանդես եկած չորս թիմեր «Հայկը», ԴԻՄԱ-1-ը, «Նաիրիտը» եւ «Արմավիրը» մայիսի 11-13-ը Արմավիրում կմրցեն եզրափակիչ առաջին փուլում:

ՇԱԽՄԱՏ

Գյումրեցի Արա Մինասյանը՝ Երեւանի կրկնակի չեմպիոն

Հայաստանի տղամարդկանց 59-րդ առաջնության առաջին խմբի մրցաշարն ավարտվեց միջազգային վարպետ Արա Մինասյանի հաղթանակով: Գյումրեցի շախմատիստը համառորեն պայքարում էր բոլոր հակառակորդների դեմ, եւ վերջին տուրի իր պարտիան Գեւորգ Հարությունյանի դեմ ամենավերջինն էլ ավարտվեց, թեպետ Արան միանձնյա առաջին տեղ էր ապահովել: Ի վերջո այս պարտիան ավարտվեց Արայի օգտին: 11 հնարավորից 9 միավոր վերջնական արդյունքը նկատելիորեն բարձրացրեց Մինասյանի անհատական վարկանիշը (+20 կետ): Բացի այդ, ինչպես եւ երկու տարի առաջ, Արա Մինասյանը նվաճեց մայրաքաղաքի չեմպիոնի տիտղոսը: Նկատենք, որ պետական մարմիններին թույլատրվում է նմանօրինակ մրցաշարերի հաղթողներին պարգեւատրել ընդամենը 1000 դրամ մրցանակով: Միգուցե եկել է վերջապես ժամանակը, երբ կարելի է վերանայել արհեստավարժ մարզիկների արժանապատվությունն արհամարհող այդ գումարի չափը:

Արա Մինասյանն այս մրցաշարի գլխավոր, բայց միակ հերոսը չէր: Կանոնադրության համաձայն, առաջին երեք տեղերը գրավող շախմատիստներն իրավունք էին ստանում մասնակցելու այս տարվա առաջնության բարձրագույն խմբի մրցաշարին: Եթե մի ուղեգրի ճակատագիրը պարզ էր, առա մնացած երկուսին վերջին տուրից առաջ հավակնում էին 6 խաղացողներ, եւ նրանցից չորսը 7,5-ական միավորով բաժանեցին 2-5-րդ տեղերը: Ինչպես սրամտորեն նշվեց մրցաշարի փակման ժամանակ, բարձրագույն խմբում հանդես գալու իրավունքը, իր իսկ ասածներն հետ համառ պայքարում, նվաճեց միջազգային վարպետ Ասոն Նադանյանը: Այո, նույնքան միավոր վաստակած Վարուժան Հակոբյանը, ԴԻԴԵ-ի վարպետ Գաբրիել Սարգսյանը, ինչպես նաեւ 7 միավորով 6-րդ հորիզոնականը զբաղեցրած ԴԻԴԵ-ի վարպետ Դավիթ Պետրոսյանը Ասոն Նադանյանի սաներն են: Հետաքրքիր է, որ կանոնադրությամբ նախատեսված բոլոր երեք լրացուցիչ ցուցանիշներով Նադանյանն ու Հակոբյանը բացարձակ հավասար արդյունք ցույց տվեցին: Քանի որ 2-րդ եւ 3-րդ տեղերի տարբերությունն այս պարագայում էական չէր, 2-րդ կարգի պատվոգիրը որոշվեց հանձնել մարզչին: Շնչին տարբերությամբ 4-րդը ճանաչվեց Անդրանիկ Մաթիկոզյանը, որը, «որպես փոխհատուցում», արդեն երրորդ անգամ լրացրեց միջազգային վարպետի նորման: Նրան, ինչպես նաեւ Գաբրիել Սարգսյանին, որը կատարել էր անհրաժեշտ պահանջներն ավելի վաղ, ԴԻԴԵ-ի մոտակա գլխավոր համաժողովում կընդունվի այդ պատվավոր կոչումը: Լրացուցիչ ցուցանիշներով 5-րդ տեղում է Գաբրիել Սարգսյանը: Վերջին երկու շախմատիստները, սակայն, լքեցք է հուսահատվեն: Հնարավոր է, որ բարձրագույն խմբի մրցաշարում առաջանան թափուր տեղեր, եւ այդ դեպքում մասնակցության առաջին թեկնածուները հենց նրանք կլինեն: Դավիթ Պետրոսյանին ու Վարուժան Հակոբյանին ընդամենը կեսական միավոր չհերիքեց մինչեւ միջազգային վարպետի առաջին նորման, բայց վերջինս կատարեց ազգային վարպետի կոչումը ստանալու համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 15-ից Երեւանում անցկացվելու է աշխարհի մինչեւ 20 տարեկան երիտասարդների եւ աղջիկների առաջնությունը: Միջազգային վարպետի կոչում կրող պատանիներից բացի Հայաստանի շախմատային ֆեդերացիան եւս երկու տեղ է հատկացրել երիտասարդական առաջնությունում մասնակցելու: Առաջին խմբի մրցաշարի արդյունքով այդ երկու ուղեգրերը բաժին հասան Վարուժան Հակոբյանին եւ Դավիթ Պետրոսյանին:

Նշենք նաեւ ամենատարեց մասնակից, միջազգային վարպետ էդուարդ Մնացականյանի խաղը, որն անցած տարվա վերջին նշեց իր 60-ամյակը: Մասնորն, ինչպես նաեւ մրցաշարի հաղթողը, չկրեց ոչ մի պարտություն եւ 6,5 միավորով մրցաշարն ավարտեց 7-12-րդ տեղերը բաժանած շախմատիստների թվում:

ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Միջազգային կարգի մրցավար

Ուսանողական խաղերի ծրագրով

Հանրապետական ուսանողական խաղերի ծրագրով անցկացված շախմատի թիմային մրցաշարն ավարտվեց Հայաստանի շախմատիստի կենտրոնական տանը: Ութ ուսանողական հաստատությունների պայքարում ամենաուժեղը Երեւանի պետական համալսարանի թիմերն էին:

Տղամարդկանց մրցաշարում համալսարանի ուսանողները (Տիգրան Դավթյան, Տիգրան Մանուկյան, Մովսես Մովսիսյան, Մհեր Հակոբյան) եզրափակիչ մրցախաղում 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի թիմին:

Կանանց մրցաշարում նույնպես հիմնական պայքարը ծավալվեց այդ երկու բուհերի թիմերի միջեւ: Եզրափակիչ մրցախաղը, ինչպես նաեւ տղամարդկանց մրցումներում, ավարտվեց համալսարանականների օգտին: Հերմինե Մխիթարյանը, Ծովինար Գեւորգյանն ու Աննա Տոնյանը Ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողուհիներին հաղթեցին 2-1 հաշվով:

Ա. Ն.

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված մրցանակային խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Հաշեկ 3. Հեթում 4. Դավիդ 6. Չեխով 7. Լորեն 9. Կաֆկա 10. Բուլոր 11. Արմավ 13. Թենիս 15. Սիսեռ 16. Գաբեն 17. Կուլոն 19. Դիմակ 22. Կարին 24. Ֆեյխտվանգեր 25. Ստնու 26. Բեկնազարյան 27. Տիտան 29. Սերվանտես 31. Շուգաս զարյան 32. Արմավիր 34. Ստուգարք 35. Գալվանի 36. Յուպիտեր 38. Վիրաղ 40. Մոնիկ 41. Որթ 44. Վեմ 49. Հիդրա 50. Իբսեն 52. Թուրակ 56. Թոսակ 58. Նայաղ 60. Մահիկ 61. Սուլիչ 63. Կաճառ 66. Հուսիկ 68. Արխար 69. Ազգավ 71. Հեմիմ 72. Ֆաուստ 75. Կեսար 76. Պեզաս 79. Շավիղ

Հորիզոնական

2. Քամ 5. Թեմեյան 8. Նեցուկ 10. Բիզոն 12. Մահուդ 14. Ցրիոս 16. Գեհեն 18. Վինկելման 20. Խուժան 21. Լիդիա 23. Բեթ 26. Բեմ 28. Փարոս 30. Ոենտգեն 31. Շամիչ 33. Նեղոս 35. Գլուկ 37. Արիպի 39. Խոտան 40. Մանուլ 42. Սինվե 43. Բարոն 45. Կոդակ 46. Ազաչա 47. Նզովք 48. Տիբեթ 49. Հայնե 51. Մզկիթ 53. Ֆիլիդ 54. Նուբար 55. Կուտեր 56. Թերեմ 57. Իշխան 59. Արսոս 60. Մեկենաս 62. Նաղաս 64. Պար 65. Նուս 67. Սաբան 70. Բուլաս 71. Հիերոգլիֆ 73. Պարեկ 74. Շաբին 75. Կարաղ 77. Ֆիշեր 78. Վերս 80. Նահատակ 81. Վին



Ուղղահայաց

1. Նվագախմբի կատարման համար գրված երաժշտական ստեղծագործություն: 2. Անդունդ, ամուլ: 3. Մտեղեն ուսելիք: 4. Մատղաշ ծառ, տնկի: 7. Հայկական պար լեռնաշղթայի կոնաձեւ գագաթը: 8. Բուլղար գրող, կոմունիստ, Հայրենական մեծ պատերազմի օրերին «Շավղար» պարտիզանական ջոկատի կոմիսարը: 10. Հայ մեծանուն կինոռեժիսոր: 11. Հայ մեծահարուստ: 13. Ցուրտքի ընտանիքին պատկանող, չափերով մեծ, սակայն ամենացածր հնչողություն ունեցող լարային աղեղնավոր երաժշտական գործիք: 14. Թանկարժեք զարդարերի վաճառքով զբաղվողը: 21. Կրկեսի ուսս արտիստ, ծաղրածու: 22. Թանկարդ, որը գայթ, ծուղակ: 23. Գյուղ Հայաստանում, Գորիսից հյուսիս արեւելք: 24. Այս հերոսը Հայրենական մեծ պատերազմի օրերին մարմնով փակել է բենզոնու դզոցի հրակնարը: 28. Ռուս մինչեւ եւ մոլդովական ժողովրդական երգ: 29. Ինքնաթիռները պահելու եւ վերանորոգելու վայր:

Հորիզոնական

5. Գերմանացի ռեժիսոր, եղել է Միջազգային թատերական միության գլխավոր քարտուղարը: 6. Սերիմոսազգի թռչուն: 9. Սուր վառելիք հիվանդություն: 12. Լեռնային հանակարգ Ամերիկայում: 15. Երկաթուղային կայարան Հայաստանի հյուսիսում: 16. Ռուս սովետական բանաստեղծ, թարգմանիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ: 17. Բույսերի վնասատուների եւ հիվանդությունների դեմ պայքարող դեղամիջոց: 18. Չայկովսկու օպերաներից: 19. Մեզ լիացի կովկասագետ, հայագետ: 20. «Ամենատոնի» հեղինակը: 25. Հայ գրող, բանաստեղծ: 26. Հագուստի մանրամասն: 27. Աֆրիկյան ամենամեծ լեզվաընտանիքը: 30. Սարդու եւ կենդանիների ներքին օրգանները պատող լորձաթաղանթ: 31. Լեոնկավալոյի օպերաներից: 32. «Ռայմոնդա» օպերայի հեղինակը:

Կազմեց է՝ ՍՎԵՏԻՍՅՍԼԸ

Հաջորդ «Ազգի» մրցանակային խաչբառի հաղթող է ճանաչվել եւ արժեքավոր մրցանակին արժանացել Նվարդ Յուլյան Ղանդիլյանը.

Խրախուսական մրցանակների են արժանացել տնտեսագետ Հովսեփ Լեհեմյանը եւ թիվ 199 դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ Նարեկ Սվեհիսյանը.

Հաջորդ մրցանակային խաչբառը կտպագրվի «Ազգի» մայիսի 15-ի համարում:

Փորձել լուծել, եւ արժեքավոր մրցանակը ձեզնն է:

digitised by A.R.A.R.@

«ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը պատշաճական նամակ է ստացել «Մարշալ Բաղրամյան» նորաստեղծ հիմնադրամի նախագահ, գեներալ-մայոր Ռ. Մ. Կարապետյանից, որը տեղեկացնում է, թե պանծալի զորավարի հիշատակը հավերժացնելու նպատակով ստեղծված հիմնադրամի առաջնահերթ ծրագիրն է մարշալի տուն-թանգարանը եւ նրա հուշարձանը կանգնեցնել Երեւանում, որի համար հանգանակություն է սկսվել պետական, մասնավոր եւ հասարակական կազմակերպություններից, ձեռնարկություններից, անհատ քաղաքացիներից, այդ թվում արտասահմանյան քաղաքացիներից:

Հիմնադրամի հաշվեհամարներն են՝

Հայագրոբանկի Երեւանի քաղաքային բաժանմունք, դրամով՝

142010018034, RR՝ 142010038024 եւ $՝ 142010038032:

ՀՌԱԿ վարչությունը ս. թ. մայիսի 8-ին Հայրենական պատերազմի վետերանների հետ հանդիպման ընթացքում տված խոստումը հարգելով, իր մասնակցությունն է բերում հանգանակությանը եւ միաժամանակ կոչ է անում իր շարքայիններին թե համակիրներին նյութապես աջակցել «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամի ազգանպաստ գործունեությանը:

ՀՌԱԿ ՀԱՄԱԿԻՐՆԵՐԻՆ

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության նախընտրական հիմնադրամ

Բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են նյութական օժանդակությամբ նպաստել Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության նախընտրական քարոզարշավին, ՀՀ Կենտրոնական բանկում բացված է ՀՌԱԿ նախընտրական հիմնադրամի հաշիվ:

Խնդրում ենք Ձեր նվիրատվությունները փոխանցել հետեւյալ հաշվեհամարով

h/h 10300040'80778
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՌԱԿ Կենտրոնական գրասենյակ. Կորյունի 19 ա. 3-րդ հարկ. հեռ. 52-64-03, 52-54-43, 52-14-95

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՅԱՆԸ

Լուսագրող-արձակագիր Վանիկ Սանթրյանը հրավիրում է բոլոր բարեկամներին եւ ընկերներին ներկա գտնվելու իր գեղանկարչական նոր աշխատանքների ցուցահանդեսի բացմանը եւ «Արմատների կանչը» («Շառլ Ազնավուր») գրքի շնորհանդեսին:

Բացումը՝ մայիսի 14-ին, ժամը 16-ին նորաբաց «Արվեստի սրահում» (Բաղրամյան պող. թիվ 23, մետրոյի կայարանի հարեւանությամբ):

Արարողությունը նվիրվում է Շառլ Ազնավուրի՝ ծննդյան 75-ամյակին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հատուկ դասընթացների բաժին

Թափուր աշխատատեղ

Հայերենից անգլերենի թարգմանիչ

(գրավոր)

Պահանջներ

- Անգլերենի եւ հայերենի լավ իմացություն
- Ms Word համակարգչային ծրագրի իմացություն:

Անգլերենի իմացության գրավոր ստուգարքը տեղի կունենա 1999 թ. մայիսի 20-ին, ժամը 13:00-15:00, ՀԱՀ-ի 23 սենյակում: Թույլատրվում է օգտվել բառարաններից:

Ցանկացողները կարող են ներկայացնել իրենց ինքնակենսագրությունը մինչեւ ս. թ. մայիսի 19-ը ՀԱՀ հատուկ դասընթացների բաժին, 19ա սենյակ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Մայիսի 13-ին, ժամը 15-ին, գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա բանաստեղծ-թատերագիր **ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ** ստեղծագործական ցերեկույթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի

հատուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք ծրագիր

ՀՀ կենտրոնական հանձնաժողովի նախկին նախագահ, կառավարման դոկտորի տնօրեն

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՋՅԱՆԸ

ներկայացնում է

«ՀՀ ընտրական համակարգը»

հինգշաբթի, մայիսի 13-ին, ժամը 18:00-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի մեծ դահլիճում:

Դասախոսությունը կընթանա հայերեն՝ համաժամանակյա անգլերեն թարգմանությամբ:

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԱՐԴՈՒ ՍԵՓԱԿԱՆ ԳԻՐՔԸ



Օրենսդրության զարգացմանն աջակցող իրավագիտական կենտրոնը, որը ժամանակին մշակել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի նախագիծը, Վլադիմիր Նազարյանի խմբագրությամբ հրատարակել է «Քաղաքացիական իրավական պայմանագրերի նմուշներ՝ օրենսդրական պարզաբանումներով» ժողովածուն:

Գրքում զետեղված են մանրածախ առեւտրի, մատակարարման, հողամասերի, շենքերի եւ շինությունների, բնակարանների, տրանսպորտային միջոցների եւ այլ անշարժ ու շարժական գույքի առուվաճառքի, փոխանակության, ռենտայի, նվիրատվության, վարձակալության, լիզինգի, կապալի, վճարովի ծառայությունների մատուցման, փոխատվության, փոխառության, վարկի, բանկային ավանդի եւ բանկային հաշվի, հանձնարարության, կոմիսիայի, գործակալության, ֆակտորինգի, պահատվության, փոխադրման, առաքման, աղահովագրության, գույքի հավատարմագրային կառավարման համատեղ գործունեության եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պայմանագրերի այլ տեսակների օրինակելի նմուշները, որոնց օգտագործմամբ հետեւությամբ կարելի է կնքել օրենսդրության պահանջներին համապատասխանող ցանկացած պայմանագիր:

ՀԱՐԳԵԼԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐ

Եթե ցանկանում եք, որ Ձեր կնքած պայմանագրերում հստակ սահմանված լինեն կողմերի իրավունքները եւ պարտականությունները, պատասխանատվությունը պայմանագրի խախտման համար, եթե ուզում եք զերծ մնալ դատական վեճերից, գնեք այս ժողովածուն: Այն կդառնա Ձեր սեղանի գիրքը եւ կօգնի կնքելու օրենսդրության պահանջներին համապատասխանող ցանկացած պայմանագիր:

Ժողովածուի տպագրության կամ որեւէ այլ ձեւով բազմացումն ու տարածումն առանց իրավագիտության կենտրոնի թույլտվության արգելվում է օրենքով:

Ժողովածուն վաճառվում է «Անի» կոոպերատիվի գրախանութում՝ Երեւան, Հանրապետության հրապարակ, թիվ 2 կառավարական շենք:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԵՌՈՒՏԱՊՐԱԳՐԵՐ

11 Մայիս

9.00 Հայկոր
9.20 Բարի լույս, Հայաստան
10.20 Հեռուստաթերթ «Սոխուռը»
11.15 Արտակարգ պրիմ
11.30 Վաղեռագրական ֆիլմակար «Գեորգ Էնին»
11.55 Հիթ շերթ
12.30 Սասնայից հարսանեկանություն
13.00 Հայկոր
13.15 Միասին («Սիր»)
17.00 Հայկոր
17.20 Տանտանիկ
17.40 Հեռուստաթերթ «Սոխուռը»
18.30 Հեռուստապատ
19.00 Ընտրարշավ
Արբանյակային հեռարձակմամբ
19.00 Լիկոլ Գալանտերյանի երգերը
19.30 Հովհաննես Թումանյան. «Կրանի էջեր»
20.25 Կարճամետրաժ ֆիլմակար «Ունիսոն»
21.00 Հայկոր
21.30 1 լուր
21.45 Սպոր
22.10 Գ/Ֆ «Սաֆիսյան գինի»
23.40 Հենց պիտես
00.00 Հայկոր
00.15 Արտակարգ պրիմ
00.30 Ուշ երեկոյան
01.30 Հեռուստաթերթ «Երեկ, այսօր, վաղը»
Արբանյակային հեռարձակմամբ
02.00 Հեռուստաթերթ «Քաղաքի գեղը»
03.00 Բարի լույս, Հայաստան

9.00 Տոնար
11.00 Գ/Ֆ «Կարգին տղերք» (2-րդ մաս)
19.00 Սուպերֆիլմեր
19.30 Սուրհանդակ
20.15 Ստոս Դաշտարյանի ծննդյան առթիվ 50 ա ծնունդին կֆ «Գողը»
20.40 Ցեղի հուշեր
21.15 Հրապարակ
21.30 Սուրհանդակ
22.15 Հեռագիր
23.05 Բարալ
23.30 Սուրհանդակ
24.00 Սնոռոր
00.05 Մի անգամ
00.10 Խուժան պրիմ
00.30 Ի դեղ
00.55 Գ/Ֆ «Երդին»
02.30 Սուրհանդակ

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
11.30-15.45 Բիզնես TV
16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Տիեզերական ոստիկանություն»
16.45 Երգանիկ դիտակետ
17.30 Մինչեւ 16 եւ բարեր
18.00 Սերիալ «Հանուն սիրո»
19.00 Նորություններ
19.15 Գուշակիր մեղեդին
19.45 Սպորտ եւ Ինձա
20.05 Ինձա
20.50 Սերիալ «Սրգուն»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.35 Գ/Ֆ «Ընկերություն ոնանությանց» (դերում Ս. Սերյան, Գ. Գրիգոր. Վ. Կուրանով)

00.20 Ցերեւս
00.35 «Խաղաղ տուն»
01.10 Ֆանտաստիկ սերիալ «Վառվող գոտի»

8.00-10.45 Բարի լույս, Ռուսաստան
8.20 Բոլորի շուրթերին
8.40 Ճանապարհ առանց վտանգի
8.45 Հեռուստաֆիլմ «Հաղորդումների ծրագիր»
9.15 Դոկտոր Բոգդանովի խորհուրդները
10.45 Սոչանվեր փոստով
11.10 Սերիալ «Միլեդի»
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.20 Լուրեր
12.35 Հեռուստաթերթ «Հաղորդի գոգը» (Հեղ կասան)
13.30 Երկխոսություններ կենդանիների մասին
14.30 Խանութ բազմոցի վրա
15.30 Սերիալ երեխաների համար «Հրաշագործը»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նեղանալորները»
17.10 Երաժշտություն, երաժշտություն...
17.20 Սերիալ «Սարդին հանցագործներ»
17.55 Սաղոյության աշխարհ
18.30 Սեսարակ
19.00 Հոմոնոստիա եւ սաղոյություն
19.05 Հեռուստաթերթ «Ոգորում գեղը» (1-ին դիտ)
20.30 Սանկան շուրթերով
21.40 Սանրանանոներ
21.50 «Սնչաղը» ներկայացնում է
22.25 Դերասանական ժրանակի դասընթացների ուսանողների ելույթը
00.00 Ուրախ Ossp... Nis
01.05 Հերթապահ բանանոնում

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ԱՆՎՃԱՐ «Հայաստանի ձեռնարկություններ եւ կազմակերպություններ» տեղեկագիրքը ձեռնարկություններին տրամադրվում է անվճար: Զանգահարել 581351, 569393 «ՍՓՅՈՒՌ»

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 1045 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության՝ 10. 05. 1999 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@